

ՄՏԵՊԱՆ
ՔՈՒՌՆԱՇԵՎ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ
ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Ա

ՍՏԵՊԱՆ ԲՈՒՌՆԱՇԵՎ

Թարգմանությունը բնագրից, ներածությունը և
ծանոթագրությունները՝ Գ. ժ. Մխիթարյանի

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

FOREIGN SOURCES ABOUT ARMENIA AND NEIGHBOURING
COUNTRIES

RUSSIAN SOURCES

I

СТЕПАН БУРНАШЕВ

Translated with notes by
G. Z. MKHITARYAN

YEREVAN 2020

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ ОБ АРМЕНИИ И СОПРЕ-
ДЕЛЬНЫХ СТРАН

РУССКИЕ ИСТОЧНИКИ

I

СТЕПАН БУРНАШЕВ

Перевод и комментарии Г. Ж. МХИТАРЯН

ЕРЕВАН 2020

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ
Պատասխանատու խմբագիր՝ Բ. Կոստիկյան

Օ 780 Օտար աղբյուրները Հայաստանի և հարակից երկրների մասին,
հ. 19: Ռուսական աղբյուրներ, պր. Ա: Ստեպան Բոտնաշև: Նկարագրություն Պարսկաստանում աղբյուրաբանական նահանգների
և նրանց քաղաքական կարգավիճակի /թարգմանությունը քնա-
գրից, ներածությունը և ծանոթագրությունները՝ Գ. Ժ. Մխիթար-
յանի, Երևան: «Գիտություն» հրատ., 2020, 160 էջ:

Գրքում տրվում է XVIII դարի ռուսական աղբյուրներից Ստե-
պան Բոտնաշևի՝ Հայաստանի և հարակից երկրների պատմու-
թյանը նվիրված «Նկարագրություն Պարսկաստանում աղբյուրաբա-
նական նահանգների և նրանց քաղաքական կարգավիճակի» աշ-
խատության ամբողջական թարգմանությունը:

Աշխատությունը նախատեսված է հայագետների և արևելա-
գետների համար:



A handwritten signature in cursive script, likely belonging to the author or a related figure. The signature is written in dark ink on a light background.

«Օտար աղբյուրները Հայաստանի և հարակից երկրների մասին» ընդհանուր խորագրով աշխատությունների շարքի գլխավոր նպատակն է գիտական լայն շրջանառության մեջ դնել ռուսական այն սկզբնաղբյուրները, որոնք կարևոր նշանակություն ունեն մեր տարածաշրջանի ժողովուրդների ժԸ դարի պատմության առանցքային հիմնահարցերի լուսաբանման համար: Այդ շարքով մտադիր ենք Այսրկովկասին վերաբերող ժԸ դարի ռուս գիտական գրականության հուշարձանները ներկայացնել աստիճանաբար և ըստ հասանելիության:

Այս հատորում ներկայացված է Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորությունում 1783-1787 թթ. ծառայություն անցկացրած Ռուսական կայսրության հատուկ հանձնակատար Ստեպան Բոտնաշևի փոքրածավալ աշխատությունը, որը տպագրվել է 1793 թ. Կուրսկում. Ս. Բոտնաշև, «Նկարագրություն Պարսկաստանում աղբյուրի ժանակական նահանգների և նրանց քաղաքական կարգավիճակի»¹:

Նյութի շարադրման ընթացքում փորձել ենք հնարավորինս պահպանել բնագրի լեզվի յուրահատկությունը, հեղինակի ոճը՝ դրանք հարմարեցնելով հայերենի լեզվաճանկան առանձնահատկություններին, շարահյուսությանը և ժամանակակից լեզվամտածողությանը:

[] - քառակուսի փակագծերում ավելացրել ենք բնագրում չնշված բառեր, որոնք առավել ընկալելի և ամբողջական են դարձնում հեղինակի միտքը:

() - կլոր փակագծերում նշել ենք անձնանունների և տեղանունների՝ հեղինակի կողմից նշված ձևերը, իսկ թարգ-

մանության մեջ օգտագործում ենք ներկայումս շրջանառու տարբերակները:

* – աստղանիշով նշել ենք բնագրում հանդիպող ծանոթագրությունները:

Խորին երախտագիտություն ենք հայտնում գրքի խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր Քրիստինե Կոստիկյանին՝ սույն աշխատության ծանոթագրություններում օգտագործված իրանական սկզբնաղբյուրների թարգմանությունները սիրով մեզ տրամադրելու համար:

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԺԸ ԴԱՐ)

Ռուսական իրականության մեջ Այսրկովկասի նկատմամբ հետաքրքրությունը սկզբնավորվել էր դեռևս տարբերությունների (неотомы) ժամանակաշրջանից: Իսկ ԺԵ-ԺԷ դարերում արդեն ձևավորվել էր տարածաշրջանի նկարագրության գրական ժանրի ավանդույթը: Ռուս վաճառականներ Աֆանասի Նիկիտինի (ԺԵ դար) և Ֆյոդոր Կոտովի (ԺԷ դար) ճանապարհորդական նոթերն աղբյուրագիտական հպանցիկ տվյալներ էին հաղորդում Արևելյան Այսրկովկասի կենտրոններ Դերբենդի, Շամախիի, Բաքվի ու մի շարք այլ բնակավայրերի էթնո-քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ: Նրանց ստեղծագործությունները կարճ տեղեկություններ էին տալիս տարածաշրջանի ժողովուրդների ավանդույթների, կենցաղի, սովորույթների մասին: Հեղինակները մանրամասն ներկայացնում էին իրենց ճանապարհորդության ուղին՝ ուղեգրություններին հաղորդելով յուրատեսակ ձեռնարկ-ուղեցույցի բնույթ:

Եթե պատմական նախորդ ժամանակաշրջաններում Այսրկովկասի հայկական բնակչության ու մյուս ժողովուրդների մասին տեղեկությունները հիմնականում հանդիպում են եվրոպացի հեղինակների երկերում և ուղեգրություններում, ապա ԺԸ դարում նրանց մասին հիշատակությունները մեծ ծավալով հայտնվում են նաև ռուսական սկզբնաղբյուրներում: ԺԸ դարի ռուսական երկերը դառնում են Այսրկովկասի ժողովուրդների իրավաքաղաքական, սոցիալ-տնտեսական պատմության, երկրամասի ազգագրական ու ժողո-

վրդագրական պատկերը ներկայացնող կարևորագույն սկզբնաղբյուրներ: Նրանց բովանդակած նյութերի համադրումը արևելյան (իրանական, թուրքական) և եվրոպական պատմագրական աղբյուրների հետ որոշիչ նշանակություն ունի տարածաշրջանի բախտորոշ մի ժամանակաշրջանի պատմության ամբողջացման համար:

Ռուս հեղինակների հետաքրքրության աճի հանգամանքը պայմանավորված էր Ռուսական կայսրության այսրկովկասյան քաղաքականության ակտիվացմամբ: Այսպես՝ ժՐ դարի սկզբին Պետրոս Ա կայսեր ուրվագծած և դարի երկրորդ կեսին Եկատերինա Բ-ի շարունակած ռուսական այսրկովկասյան քաղաքականությունը նախատեսում էր տարածաշրջանը մինչև իրանական Գիլան ու Մազանդարան նահանգներն ընդգրկել ռուսական ռազմաքաղաքական, առևտրատնտեսական ազդեցության գոտում՝ ամրապնդելով ռուսական պետության դիրքերը ողջ Մերձավոր Արևելքում ու ճանապարհի հարթելով դեպի Պարսից ծոց և Հնդկաստան: Վերը նշված ծրագրերի իրագործման նպատակով ռուսաստանյան իշխանություններին անհրաժեշտ էր ճանաչելի դարձնել տարածաշրջանը և ձեռք բերել հուսալի քաղաքական հենարան՝ ի դեմս քրիստոնյա բնակչության, մասնավորապես՝ հայերի, որոնք Այսրկովկասի ժՐ դարի էթնո-քաղաքական խճանկարում իրենց ուրույն տեղն ու դերն ունեին:

Այսրկովկասի ժողովուրդների, այդ թվում՝ հայերի քաղաքական, սոցիալ-տնտեսական, ազգագրական, էթնո-դավանական պատկերի ուսումնասիրմամբ նշանակալից էին Ա. Վոլինսկու, Զ. Բելի, Ֆ. Սոյմոնովի, Յ. Գերբերի, Յ. Լեբխեի, Ս. Գմեյնի, Յ. Գեորգիի, Ստ. Բուռնաշևի, ինչպես նաև կոմս Վ. Զուբովի՝ 1796 թ. դեպի Այսրկովկաս կատարած կաս-

պիական կամ պարսկական արշավանքի մասնակից ռուսական հրամանատարների երկերը:

Մինևույն ժամանակ, նշված սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը կարևոր է Այսրկովկասի և Իրանի ժՐ դարի քաղաքական պատմության լուսաբանման առումով, քանի որ ծավալված քաղաքական իրադարձությունները հնարավոր է ներկայացնել փոփոխությունների շղթայական ամբողջության մեջ: Դա թույլ է տալիս նաև տեսնել հայերի և Այսրկովկասի մյուս ժողովուրդների իրավական և սոցիալական կարգավիճակի փոփոխությունները՝ պայմանավորված տարածաշրջանում քաղաքական գաղազացումներով:

Նշված ժամանակաշրջանի ռուսական սկզբնաղբյուրների առաձևահատկություններից է այն, որ նրանց հեղինակները ծագումով հիմնականում եվրոպացիներ էին, թեպետ գտնվում էին ռուսական ծառայության մեջ և հատուկ ցուցումով պարտավոր էին կազմել իրենց այցելած երկրների էթնո-քաղաքական, պատմաաշխարհագրական, ազգագրական, սոցիալ-տնտեսական, իրավական պատկերի նկարագրությունները:

ԺՐ դարի սկզբին Այսրկովկասի քաղաքական պատմության, հայերի և այսրկովկասյան այլ ժողովուրդների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում ազգությամբ շոտլանդացի բժիշկ Ջոն Բելը (John Bell, 1691-1780), որը 1715-1718 թթ. Ա. Վոլինսկու գլխավորությամբ Իրան այցելած ռուսական պատվիրակության անդամ էր: Նրա ճանապարհին անցել էր Արևելյան Այսրկովկասով, ինչի շնորհիվ հեղինակն արժեքավոր նկարագրություններ է կազմել այդ տարածաշրջանի մասին իր օրագրում:

Զ. Բելը մանրամասն նկարագրում է Մերձկասպյան

շրջանների և Սեֆյան պետության քաղաքական իրավիճակը, վարչական կառուցվածքը և իրավական կարգավիճակը: Միաժամանակ, նա անդրադառնում է այցելած նահանգների ազգային նկարագրին և որոշ տեղեկություններ հաղորդում հայերի մասին՝ արժևորելով Սեֆյան պետության մեջ վերջիններիս ունեցած կարևոր դերակատարումը: Ըստ նրա՝ հայերն իրականացնում էին «պարսից առևտրի մեծագույն մասը»²: Ի դեպ, ռուսական պատվիրակությունը հայ վաճառականների հանդիպում է ուղևորության գրեթե ողջ ընթացքում:

Ջ. Բելի «Ճանապարհորդություններ» երկը ԺԸ դարի այն կարևորագույն ռուսական սկզբնաղբյուրներից է, որում ներկայացված է իրանական պետության, այդ թվում՝ նրա Շիրվանի բեկլարբեկության ամենօրյա իրականությունը և էթնիկ կազմը: Այսպես՝ թեև Շամսիի քաղաքի բնակչության գերակշիռ մասը «պարսիկներ էին», նշում է Ջ. Բելը, սակայն զգալի թիվ էին կազմում նաև վրացիներն ու հայերը³: Հեղինակի ուշադրությունից չի վրիպել Շամսիիում հայկական կաթոլիկ ոչ մեծ համայնքը, որը ղեկավարում էր եվրոպացի մի հոգևորական⁴: Ուշագրավ է նաև նրա գրառումը Արարատ լեռան և նրա նկատմամբ հայերի առանձնահատուկ վերաբերմունքի մասին⁵:

Պետրոս Ա-ի կասպիական արշավանքի մասնակից, 1727-1729 թթ. ռուս-թուրքական սահմանագծման աշխատանքների ղեկավար, ազգությամբ գերմանացի Յոհան Գուստավ Գերբերը (Johann Gustav Gaerber, մոտ 1690 – 1734 թթ.)⁶ հատուկ հանձնարարություն է ունեցել՝ կազմելու Աստրախանից մինչև Կուր գետն ընկած տարածքների նկարագրությունը: Նրա աշխատությունը կարելի է բնութագրել որ-

պես Արևելյան Այսրկովկասի պատմական, քաղաքական, էթնո-դավանական, սոցիալ-տնտեսական և իրավական պատկերի մասին ամբողջական հաղորդում:

Յ. Գերբերը տալիս է Սեֆյան պետության անկումից հետո Արևելյան Այսրկովկասում և Դաղստանում ստեղծված խառնակ ժամանակների հստակ պատկերը՝ ակնատեսի վկայությամբ: Իր շարադրանքում Յ. Գերբերն անդրադառնում է ոչ միայն նաև Այսրկովկասի հյուսիսարևելյան հատվածի հայերին, այլև ուշագրավ դիտարկումներ է անում լեզգիների, թաթարների, հրեաների, վրացիների, արաբների և այլ ժողովուրդների մասին: Նրա աշխատությունն ընթերցողին ներկայանում է իբրև տարածաշրջանի համալիր ուսմանասիրություն, որի հեղինակը փոխանցում է Այսրկովկասում իր ուղևորության հարուստ փորձի ողջ խճանկարը:

Դաղստանում, Արևելյան Այսրկովկասում 1730-1740-ական թթ. ծավալվող քաղաքական իրադարձությունների մասին շարադրանքով այցի է ընկնում գերմանացի բժիշկ Յոհան Լերխեն (Johann Jacob Lerche, 1708-1780 թթ.), որի օրագրերի և հուշագրությունների, ցավոք մասնակի, հրապարակումները բացառիկ աղբյուրագիտական նշանակություն ունեն տարածաշրջանի ժողովուրդների իրավական ու քաղաքական կարգավիճակի, սոցիալ-տնտեսական դրության, ազգային տեղաշարժերի ընկալման համար:

Առաջին անգամ Յ. Լերխեն որպես ռուսական բանակի աստրախանյան կորպուսի ռազմական բժիշկ Այսրկովկաս է այցելում 1732-1735 թթ.⁷ տարածաշրջանի համար խիստ անկայուն ժամանակաշրջանում: 1730-ական թթ. սկզբներին Իրանում փաստացի գերիշխանություն ունեցող Նադիր Դուլի խան Աֆշարը (Նադիր շահ) փորձում էր ռուսներին և

օսմանցիներին դուրս մղել Այսրկովկասից: Երբ Գանձակի 1735 թ. պայմանագրով Ռուսական կայսրությունը Իրանին է վերադարձնում նախորդ տասնամյակում գրաված Մերձկասպյան շրջանները, և ռուսական ռազմակալմանը (օկուպացիային) վերջ է դրվում, Այսրկովկասի քրիստոնյա ժողովուրդները, վախենալով մահմեդական կառավարիչների հալածանքներից, բռնում են գաղթի ճամփան դեպի Աստրախան և Ղզլար:

Յ. Լերխեն հանգամանքների բերումով 1736-1737 թթ. հաստատվում է Աստրախանում և բավական նյութեր հավաքում հայերի մասին: Նրա խոսքերով՝ քնակության համար քաղաքում իրենց հատկացված հատուկ տարածքում հայերը երեք տարում «հրաշալի տներ» էին կառուցել⁷: Նրա երկրորդ ճանապարհորդությունն Իրան տեղի է ունենում 1745-1748 թթ.⁸ իշխան Մ. Գոլիցինի ղեսպանության կազմում:

Յ. Լերխեի օրագրային հուշագրությունները լրացնում և ամբողջացնում են նախորդ տասնամյակների ռուսական սկզբնաղբյուրների՝ Աստրախանի, Կասպից ծովի արևմտյան ափի նահանգների պատմության, աշխարհագրության, բուսական և կենդանական աշխարհի նկարագրությունները, նշված տարածքների ժողովուրդների ազգային պատկերի, սոցիալ-տնտեսական, ազգագրական նյութերի ու նրանց կենսապայմանների մասին տեղեկությունները: Վերջապես՝ այդ հուշագրությունները հեղինակի երկու ճանապարհորդությունների համադրությամբ տասնամյակների կտրվածքով շահեկանորեն տեսանելի են դարձնում Այսրկովկասի և նրա ժողովուրդների, այդ թվում՝ հայերի, պատմության, կենսապայմանների, էթնո-դավանական պատկերի, իրավական կարգավիճակի փոփոխությունները:

ԺԸ դ. երկրորդ կեսին իրանական պետության փլուզման հետևանքով Այսրկովկասի խանություններն ինքնուրույն դիվանագիտական հարաբերություններ կառուցելու հնարավորություն էին ձեռք բերել և ստիպված էին իրենց անվտանգությունը պահպանել դիմելով Իրանի, Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև խուսանալելու արտաքին քաղաքականությանը⁹: Այդ ժամանակաշրջանում Այսրկովկասը, մասնավորապես՝ նրա հյուսիսարևելյան հատվածը, ռուս-իրանա-օսմանյան ռազմաքաղաքական շահերի բախման թատերաբեմ էր: Այսպես՝ թեև Քերիմ խան Ջենդին (1760-1779 թթ.) գրեթե հաջողվել էր միավորել իրանական պետությունը և հարաբերական անդորր հաստատել երկրում⁹, սակայն նրա մահվան հետևանքով գերագույն իշխանության համար պայքարը վերսկսվում է՝ «պատճառ դառնալով նոր խառնակությունների համար»¹⁰:

Արևելյան Այսրկովկասի ժԸ դարի երկրորդ կեսի պատմությունն աչքի է ընկնում ռուսական տպագիր սկզբնաղբյուրների առատությամբ, որոնցում վերլուծվում են տարածաշրջանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմությունը, լուսաբանվում է էթնիկ պատկերը՝ առանց կողմնակալ մեկնաբանությունների¹¹:

Գրական աղբյուրները հիմնված են հեղինակների անձնական դիտարկումների, զանազան ճանապարհներով (այդ թվում՝ նաև հետախուզական) ստացված տեղեկանու (ինֆորմացիայի), բանավոր փոխանցված խոսքի վրա, ինչը, սակայն, չի նվազեցրել սկզբնաղբյուրների գիտական նշանակությունը:

ԺԸ դարի 60-70-ական թթ. Այսրկովկասի և հայերի մասին բացառիկ սկզբնաղբյուր են նաև 1768-1774 թթ. ռուս-

թուրքական պատերազմի տարիներին Սանկտ Պետերբուրգի Կայսերական ակադեմիայի կազմակերպած գիտական արշավախմբի ուսումնասիրությունները: Նրա ղեկավարն էր ազգությամբ գերմանացի ակադեմիկոս Սամուիլ Գոտլիբ (Գեորգ) Գմելինը (Samuel Gottlieb Georg Gmelin, 1745-1774 թթ.), որը մեծածավալ աշխատանք է կատարում Այսրկովկասի և Իրանի հյուսիսային նահանգների պատմության հետազոտության առումով¹²: Հեղինակի «Ճանապարհորդություն» վերտառությամբ քազմահատոր աշխատությունը՝ 4 մաս, 5 գիրք, Կայսերական ակադեմիան առաջին անգամ հրատարակել է գերմաներեն¹³ դեռևս ուղևորության ընթացքում՝ 1770-1784 թթ.: Դրան զուգահեռ՝ աշխատությունը նույն ծավալով 1771-1785 թթ. նաև թարգմանաբար ներկայացվել է ռուս ընթերցողին¹⁴:

Ակադեմիկոս Ս. Գմելինի իր ուսումնասիրության 3-րդ հատորի երկու գրքերում Դերբենդի, Ղուբայի, Շամախիի, Բաքվի, Ռեշտի և իրանական այլ քնակավայրերի հայերի մասին ակնատեսի վկայություններ է ներկայացնում՝ սկսած սոցիալ-իրավական կարգավիճակից, առևտրային գործունեությունից, հոգևոր-եկեղեցական կյանքից, դավանական իրավիճակից, ազգագրական խճանկարից, մինչև հայերի հոգեկերտվածքի նկարագրությունը: Տարածաշրջանում Ռուսական կայսրության շահերի կրողը լինելով՝ նա համեմատականներ է անցկացնում ռուսական պետության և Իրանի նկատմամբ հայերի քաղաքական դիրքորոշման վերաբերյալ: Հեղինակը մեծ խանդով է խոսում իրանական իշխանությունների նկատմամբ հայերի ունեցած դրական վերաբերմունքի մասին: Ընդհանուր առմամբ՝ նա գիտնականին հատուկ դիտողականությամբ կարողանում է տարա-

ծաշրջանի հայերի պատմության, կենսապայմանների նկարագրության շրջայում մեծ ճշգրտությամբ առանձնացնել կարևորը երկրորդականից՝ ընդգծելով ամենաարժեքավորը:

Նշենք, որ Ս. Գմելինի պատմագիտական ժառանգությունը պահվում է Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի հավաքածուներում, և այնտեղ հանդիպում ենք նաև հայերի մասին անտիպ նյութերի¹⁵:

Սանկտ Պետերբուրգի Կայսերական ակադեմիայի 1768-1774 թթ. կազմակերպած, այսպես կոչված, «ֆիզիկական արշավախմբից» մեկի անդամ, ազգությամբ գերմանացի Յոհան Գոտլիբ Գեորգին (Johann Gottlieb Georgi, 1729-1802 թթ.) իր «Ռուսական պետությունում ապրող բոլոր ժողովուրդների նկարագրությունը» քառահատոր աշխատության մեջ, ի թիվս վրացիների, հնդիկների, անդրադառնում է նաև հայերին: Ազգագրական այս երկն առաջին անգամ հրատարակվել է գերմաներեն 1776-1780 թթ.¹⁶, իսկ ռուսերեն՝ 1776-1779 թթ.¹⁷:

Հայերի մասին հեղինակը գրում է աշխատության 4-րդ հատորում¹⁸: Յ. Գեորգին Այսրկովկաս չի այցելել և հայերի մասին իր տեղեկությունները հավաքագրել է Աստրախանի հայկական համայնքի օրինակով: Հարկ է նշել, որ Աստրախանի այդ համայնքը ձևավորվել էր Այսրկովկասից և Իրանից հայերի գաղթի հաշվին՝ հիմնական դրոպապատճառ ունենալով առևտրային գործունեությունը: Ընդհանուր առմամբ՝ Յ. Գեորգիի երկը կարևոր ազգագրական սկզբնաղբյուր է ժԸ դարի հայերի մասին: Հեղինակը մանրամասն ներկայացնում է նրանց, վրացիների և տարածաշրջանի այլ ժողովուրդների հոգևոր-մշակութային կյանքը, հարսանե-

կան, թաղման ծեսերը, ազգային տարազը, կենսապայմանները և այլ տեղեկություններ: Ազգագրական հարուստ նյութի փոխանցումը ամբողջացնում են տղամարդու և կնոջ տարազով նկարները:

1782-1785 թթ. Քերիմ խանի եղբորորդի Ալի Մուրադ խան Ջենդին հաջողվում է առժամանակ միավորել Իրանի տերության տարածքների մեծ մասը: Բացառություն էին Իրանի պետության՝ դաշարների¹⁹ տիրապետության տակ գտնվող հյուսիսային նահանգները և Կասպից ծովի առափնյա շրջանները: Միաժամանակ իրավիճակն ապակայունանում է Այսրկովկասում, որտեղ իրենց ինքնիշխանությունն էին ջանում պահպանել Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորությունը և այսրկովկասյան մահմեդական խանությունները:

1780-ական թվականներին Այսրկովկասի պատմության առանձնահատկությունը պայմանավորված էր տարածաշրջանում քաղաքական նոր իրավիճակի ի հայտ գալով՝ Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության նկատմամբ ռուսական հովանավորության հաստատմամբ: 1783 թ. կընքված Գեորգիևսկի դաշնագրով²⁰ Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորությունը հրաժարվում էր ինքնուրույն արտաքին քաղաքականությունից և ամբողջությամբ մտնում ռուսական ազդեցության ոլորտը²¹: Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության համար ԺԸ դ. 80-ական թվականները պատմագիտության մեջ երբեմն բնութագրվում են որպես Կովկասում ռուսական իշխանության վերականգնման ժամանակաշրջան²²:

Գեորգիևսկի դաշնագրի համաձայն՝ ռուսական զորքի (թեև՝ փոքրաթիվ) տեղակայումն Արևելյան Վրաստանում

խախտում էր տարածաշրջանային ուժերի հարաբերակցությունը թե՛ այսրկովկասյան տիրակալների շրջանում, թե՛ Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների աշխարհաքաղաքական շահերի համատեքստում²³: Դաշնագրի ստորագրումից մեկ տարի անց իշխան Գ. Պոտյոմկինը Եկատերինա Բ կայսրուհուն գրում էր, որ «պարսից շատ տիրակալներ և նրանցից գլխավորը՝ Ալի Մուրադ Իսպահանցին շարունակում էին ջանասիրաբար ցուցադրել դրացիական վերաբերմունքը Նորին կայսերական իշխանության նկատմամբ՝ որոշակի խանդով սպասելով իրենց նամակների պատասխաններին²⁴:

Մինչև Ղրիմի հիմնախնդրի վերջնական հանգուցալուծումը Ռուսաստանում «չէին շտապում վիճել» ո՛չ Իրանի տերության, ո՛չ էլ Օսմանյան կայսրության հետ՝ հանդես գալով Այսրկովկասում ստատուս քվոյի պահպանման օգտին²⁵, և չէին շտապում բացահայտ հովանավորել տեղական տիրակալներից որևէ մեկին: 1780-ական թթ. Ռուսաստանը Այսրկովկասի առավել ազդեցիկ տիրակալների՝ Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության Հերակլ Բ արքայի ու Ղուբայի Ֆաթի Ալի խանի նկատմամբ կիրառում էր քաղաքական հավասարակշռության սկզբունքը՝ թույլ չտալով Այսրկովկասում միաբևեռ ուժի ի հայտ գալը:

Ռուսաստանի ռազմաքաղաքական ազդեցությունն Այսրկովկասում ավելի է ամրապնդվում, երբ տեղի է ունենում կայսրության շահերի համար իրականացված «մեծ գործը»²⁶ Ղրիմի միացումը (համաձայն 1784 թ. հունվարի 8-ի կոնվենցիայի): Դրանով ռուսական ռազմաևստվերի համար ուղիղ ճանապարհ էր բացվում դեպի Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսի մատուցներ²⁷: Մյուս

կողմից՝ անկայուն քաղաքական վիճակ էր ստեղծվել նաև Իմերեթում, որտեղ Սողոմոն թագավորի մահվան պատճառով խառնակություններ էին սկսվել, և Մաքսիմ կաթողիկոսը հաստատվել էր Վիրքում: Գ. Պոտյոմկինի փոխանցմամբ՝ 1784 թ. նա վերադառնում է Իմերեթ՝ ժողովրդին հանդարտեցնելու և Նորին կայսերական իշխանության նկատմամբ հավատարմության ու նվիրվածության մեջ պահելու համար²⁸:

Այսպիսով, Գեորգիևսկի դաշնագրի ստորագրումը Ռուսական կայսրության այսրկովկասյան քաղաքականության համար շրջադարձային էր, քանի որ աննախադեպ ձևով ամրապնդում էր նրա ռազմաքաղաքական դիրքերը տարածաշրջանում: Այդ հանգամանքով պայմանավորված՝ Ռուսաստանը կովկասյան տիրակալների և խաների նկատմամբ առավել կոշտ դիրքորոշում էր որդեգրել: Այսպես՝ Ղարաբաղի Իբրահիմ խանը, հայկական թագավորության վերստեղծման Ռուսաստանի ծրագրերից վախենալով, դեռևս 1783 թ. ապրիլին իր հնազանդությունն էր հայտնում ռուսական գահին և պատրաստակամ էր հարկ վճարել, իսկ իշխան Պ. Պոտյոմկինը նկատում էր, որ «հարկը, որ պահանջում է ռուսական կայսրոսին, հավատարմությունն է»²⁹: Արևելյան Այսրկովկասի և Դաղստանի տիրակալների մոտ առաջացած խուճապային տրամադրությունները ստիպում էին նրանց հերթով դիմել Ռուսական կայսրությանը և քաղաքական հովանավորություն խնդրել³⁰:

Խորհրդային պատմագիտության մեջ կարծիք է արտահայտվել, թե Գեորգիևսկի դաշնագրից հետո այսրկովկասյան խաների, մասնավորապես՝ Ղուբայի Ֆաթի Ալի խանի մոտ «անկասկած ուժեղանում է ռուսամետ կողմնորոշու-

մը»³¹: Իրականում ուղիղ հակառակն էր տեղի ունենում: Այսրկովկաս ռուսական զորքի հնարավոր ներխուժման լուրերը, որոնք նախքան Գեորգիևսկի դաշնագրի կնքումն էին պտտվում, Ֆաթի Ալի խանի բացասական արձագանքին էին արժանացել³²: Հետևաբար ճիշտ կլինի արձանագրել, որ Արևելյան Այսրկովկասի խաներն անհանգստացած էին տարածաշրջանում ռուսական իշխանության ամրապնդմամբ՝ դիտելով այն որպես խանությունների ինքնուրույնության դեմ ուղղված սպառնալիք:

Նշված հանգամանքների լուսի ներքո ժՐ դ. երկրորդ կեսին Կովկասյան լեռներից հյուսիս և հարավ ընկած տարածքներում ռուսական քաղաքականության ակտիվացման պատմագիտական ուսումնասիրությունը ստանում է քաղաքական առանձնահատուկ նշանակություն:

Այսրկովկասի 1780-ական թվականների քաղաքական պատմության նկարագրությամբ հատկապես աչքի է ընկնում Ստեպան Բուռնաշևի (1743-1824 թթ.) «Նկարագրություն Պարսկաստանում Ադրբեյխանական նահանգների և նրանց քաղաքական կարգավիճակի» աշխատությունը³³: Այդ փոքրածավալ երկը Այսրկովկասի ժՐ դ. երկրորդ կեսի պատմության կարևոր սկզբնաղբյուրներից մեկն է³⁴:

Ստ. Բուռնաշևի այս պատմագրական երկը նպատակ ուներ նկարագրելու Այսրկովկասի վարչաքաղաքական կազմավորումների քաղաքական իրավիճակը՝ շեշտը դնելով նրանց արտաքին կողմնորոշման վրա: Սկզբնաղբյուրը որոշ տեղեկություններ է հաղորդում նաև այսրկովկասյան խանությունների էթնիկ պատկերի մասին: Վերջիններիս ազգային նկարագրին անդրադառնալիս հեղինակը շեշտը դնում է «քրիստոնյաների» վրա՝ որպես Այսրկովկասում Ռուսական

կայսրության համար քաղաքական հուսալի հենարանի: Հետևաբար քրիստոնյաների (իմա՝ հայերի) մասին տեղեկությունները պայմանավորված էին ռուսական պետության համար տարածաշրջանում հուսալի ազգային տարրի կարեւորությամբ:

Հայերին էական անդրադարձ կա նաև Ստ. Բուտնաշևի մյուս՝ «Վրաստանի նկարագրությունը» աշխատության մեջ, որտեղ Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորությունում ապրող հայության մասին խոսվում է որպես ազնվականների, վաճառականների, արհեստավորների և հողագործերկրագործների: Ըստ Իեղիևակի՝ «[1783 թվականին Համառուսաստանյան գահի բարձրագույն հովանավորության ներքո *Վրաստանի* անցնելու պահին *Կախեթի Քարթլիի*, թագավորություններում, *Կովկասյան* լեռներում ապրող, *վրաց թագավորից* կախվածության մեջ գտնվող էրիվան (*Երևան*) և *Գենժե (Գանձակ)* արդերթիժանական քաղաքներում ու նրանց հողերում³⁵ [ապրող], *վրացիների, հայերի, հույների, մահմեդականների*, գանազան լեռնական ժողովուրդների ու *քրդերի* թվաքանակը հաշվվում էր 42000 ծովս»³⁶:

Դարի վերջին ռուսական աղբյուրներում Կովկասի պատմության համակողմանի լուսաբանման համարյան մեծ նշանակություն ունեն Վ. Զուբովի Կասպիական արշավանքի մասնակից սպաների՝ Ա. Հախվերդովի, Պ. Բուտկովի, Ն. Դրենյակինի, Ֆ. Սիմոնովիչի, Ա. Սերեբրովի կատարած ուսումնասիրությունները³⁷: Վերջիններիս, բացի ռազմական առաջադրանքներից, նաև հանձնարարված էր կազմել տարածաշրջանի տեղագրական նկարագրությունը: Այդ աղբյուրները Այսրկովկասի 1790-ական թթ. քաղաքական,

տնտեսական, էթնիկ, սոցիալ-իրավական պատկերի համալիր ներկայացում են: Նրանցում տեղեկություններ են պահպանվել նաև Այսրկովկասի հայկական բնակչության, հատկապես նրանց թվաքանակի և տեղաբաշխվածության մասին:

Այսրկովկասի 1790-ական թթ. պատմության այս կարևորագույն սկզբնաղբյուրները գտնվում են Ռուսաստանի Դաշնության արխիվային հավաքածուներում: 1958 թ. արխիվային այդ նյութերը հատվածաբար հրատարակվել են Դաղստանի ԺԸ-ԺԺ դարերի պատմության, աշխարհագրության և ազգագրության փաստաթղթերի ժողովածուի մեջ³⁸: Սակայն խմբագիրների խոսքով՝ հրատարակվել են աղբյուրների միայն այն հատվածները, որոնք վերաբերում են Դաղստանին³⁹: Հետևաբար այս աղբյուրների արխիվային անտիպ մասին անդրադառնալու պարագայում ի հայտ կգան նորանոր տեղեկություններ, այդ թվում՝ հայերի մասին: Այդ առումով, կարծում ենք, բացառիկ նշանակություն ունեն Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղում N 99 ֆոնդում պահվող՝ Պ. Բուտկովի 1795-1796 թթ. Պարսկական արշավանքի ընթացքում կազմած նամականին (260 թերթ)⁴⁰:

ԺԸ դարի ռուսական աղբյուրներն Այսրկովկասի քաղաքական պատմության շարադրանքից բացի նաև լույս են սփռում տարածաշրջանի հայերի սոցիալ-տնտեսական դրության խնդրի վրա⁴¹: Պարզ է դառնում, որ հայ ազգաբնակչությունը մշտապես ստիպված է եղել պայքարել իր կրոնի և մշակութային արժեքային համակարգի պահպանման համար: Ֆիզիկական գոյության օրհասական խնդրին զուգընթաց առաջնահերթ էր հայ ինքնության պահպանումը:

Ամփոփելով ներկայացվող նյութը՝ հարկ է նաև նշել, որ ժԸ դարի ռուսական աղբյուրները հիմնականում զուրկ էին արխիվային և պետական փաստաթղթերի տվյալներից: Սակայն դրանց հեղինակները ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների մասնակիցներ էին, երբեմն էլ՝ գործուն դերակատարները: Ուստի այդ գրվածքները ակադեմիկոսական վկայություններ են՝ շարադրված ռուսական այսրկովկասյան քաղաքականության համատեքստում: Կասպից ծովի ափամերձ շրջանները և Իրանը նրանք դիտարկում էին ոչ միայն գիտնականի, այլև տարածաշրջանում Ռուսական կայսրության ռազմաքաղաքական, առևտրատնտեսական շահերի պաշտպանի տեսանկյունից: Ըստ այդմ՝ թեև ռուսական հեղինակներն ընդհանուր առմամբ հայերին վերաբերվում էին որպես Ռուսական կայսրության հուսալի ազգային հենարանի, այնուամենայնիվ, հաճախ էլ ոչ միանշանակ գնահատականներ էին տալիս, քանի որ դիտարկում և ընկալում էին նրանց իրենց պետության քաղաքական շահերի ամբողջության մեջ:

Նշենք նաև, որ թեպետ ժԸ դ. ռուսական սկզբնաղբյուրներն Այսրկովկասի և նրա ժողովուրդների, այդ թվում՝ հայերի մասին չափազանց արժեքավոր են, այդուհանդերձ, մեզանում դրանք գրեթե ռաունմասիրված չեն:

ԺԸ դարի ռուսական սկզբնաղբյուրները ոչ միայն ամփոփում են Այսրկովկասի քաղաքական պատմության մանրամասներ, այլև հանդիսանում են տարածաշրջանի քրիստոնյա և ոչ քրիստոնյա (մահմեդական) բնակչության էթնո-քաղաքական ու դավանական իրավիճակը ներկայացնող կարևորագույն ռաունմասիրություններ: Դրանք մեզ են հասել ճանապարհորդական ուղեգրությունների, պատ-

մագրական երկերի տեսքով, որոնց հեղինակները ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների մասնակիցներ և անգամ ակտիվ դերակատարներ էին:

Ճանապարհների դժվարանցանելիության, երբեմն քաղաքական իրավիճակի խառն ու անկայուն լինելու հետևանքով ռուսական հեղինակների ուղևորությունները ձգվում էին մի քանի ամսից մինչև մի քանի տարի: Այդ ընթացքում նրանք հնարավորություն էին ունենում մեծածավալ փաստագրական նյութեր, ականատեսի վկայություններ հավաքել տարածաշրջանի պատմության, քաղաքական իրավիճակի, ազգագրության, էթնիկ ու դավանական պատկերի, ավանդույթների, սովորույթների, կենցաղի մասին: Հետաքրքրությունից և անհրաժեշտությունից դրդված՝ ճանապարհորդները կատարում էին նկարագրողումներ ու գծապատկերներ, կազմում՝ աշխարհագրական քարտեզներ և այլն:

Ինչպես նշեցինք, Այսրկովկասի ժողովուրդներին ռուսական աղբյուրները դիտարկում էին տարածաշրջանում իրենց պետության ռազմաքաղաքական շահերի համատեքստում: Այսպես՝ նրանք մեծ զգուշավորություն էին ցուցաբերում մահմեդականների նկատմամբ՝ հաշվի առնելով վերջիններիս կրոնական ընդհանրությունը իրանական կամ օսմանյան պետությունների հետ: Միևնույն ժամանակ, Այսրկովկասի հայերն ու վրացիները դիտարկում էին որպես համեմատաբար հուսալի էթնիկ և քաղաքական հենարան:

ԺԸ դարի ընթացքում Այսրկովկասը պարբերաբար ենթարկվում էր նվաճողների հարձակումների և էթնո-մշակութային փոխակերպումների: Ուստի երկրամասի էթնո-դավանական պատմության ռաունմասիրությունը սերտորեն կապված է տարածաշրջանի ժողովուրդների ճակատագրերի

հետ: Այսրկովկասի էթն-քաղաքական պատկերը նշված ժամանակաշրջանում փոփոխվում է ոչ միայն ռազմաքաղաքական զարգացումների հետևանքով, այլև ժողովուրդների բնի տեղահանության արդյունքում: Ընդ որում՝ Այսրկովկասի նկատմամբ Օսմանյան ու Ռուսական կայսրությունների ակտիվ քաղաքականության և երկրամասի ներքին գործերին ուղղակի միջամտության հետևանքով այստեղ էթնո-դավանական իրավիճակը սրվում էր ոչ միայն քրիստոնյաների, այլև մահմեդականների համար:

Այսպիսով, ռուսական պատմական երկերը հանդիսանում են Այսրկովկասի ԺԸ դարի քաղաքական, սոցիալ-տնտեսական և էթնո-դավանական պատմության կարևորագույն սկզբնաղբյուրներ, որոնց հեղինակները ընթերցողին են փոխանցում տարածաշրջանի մասին իրենց հարուստ տեղեկանու համալիր խճանկարը: Այդ ճանապարհորդական գրառումները, հուշագրությունները և ուղեգրությունները ժամանակի ընթացքում ստեղծում են կովկասագիտական հարուստ հիմնաքաղա՝ հաջորդ սերունդներից «ակնկալելով» նորանոր տեղեկությունների, հետազոտությունների ավելացում և կատարելագործում:

ՍՏԵՊԱՆ ԲՈՒՆԱՇԵՎԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ

Ստեպան Բունաշևը ծնվել է 1743 թ. հոկտեմբերի 8-ին⁴²: Բունաշևների ազնվական տոհմի մասին հիշատակություններ հանդիպում են դեռևս ԺԷ դարում⁴³: Բունաշևների տոհմը սկիզբ է առնում Ղրիմի Մենգլի Գիրեյ խանի որդի Բունաշ Գիրեյից, որը 1508 թ. հպատակություն էր հայտնել Իվան Գ-ին⁴⁴, իսկ վերջինիս հաջորդներից Ալեքսեյ Միխայլովիչը 1649 թ. Բունաշևներին տարեկան 125 ռուբլի աշխատավարձ էր նշանակել⁴⁵:

Ստեպան Բունաշևը 16 տարեկանում ընդունվում է ճարտարապետական կրպուս և ուսումն ավարտելուց հետո մասնակցում մի շարք ամրոցների կառուցմանը, ապա ղեկավարում ջրային ճանապարհաշինության հանձնաժողովի աշխատանքները:

1766 թ. Ստ. Բունաշևը պորուտչիկի նշանակում է ստանում և 1768 թ. ցանկություն հայտնում մասնակցելու նոր սկսված ռուս-թուրքական պատերազմին⁴⁶: Նա որպես կամավոր մեկնում է ռազմաճակատ՝ ստանձնելով իշխան Ա. Շչեքբատովի (1750-1796 թթ.) կորպուսի հրամանատարությունը: Ռազմական գործողությունների արդյունքում նրան հաջողվում է գրավել Արբատ⁴⁷, Կերչ, Ենիկալե ամրոցները և պարզապարզվել Ա. Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշանով ու զինվորական կոչումի բարձրացում ստանալ: Պատերազմի մնացած տարիները Ստ. Բունաշևն անց է կացնում Ղրիմում՝ կովելով թուրքերի դեմ: Իր վկայությամբ՝ այդ տարիներին նա կատարում է Ղրիմի լեռնային տեղանքի երկրաչափական չափագրումները և 1776 թ. դրանք ներկայացնում

թագաժառանգ Պավել Ալեքսանդրովիչին⁴⁶:

Պատերազմի ավարտից հետո Ստ. Բուռնաշևը մասնակցում է Ս. Պետերբուրգում հասարակական շենքերի կառուցմանը, իսկ 1775 թ. ստանում փոխգնդապետի կոչում:

1778 թ. Ստ. Բուռնաշևը մասնակցում է դեպի Ղրիմի թերակղզի ռուսական զորքերի կատարած արշավանքին որպես Շիրվանի գնդի հրամանատար, ապա իր զորաջոկատով մասնակցում Խերսոնում ամրոցների կառուցման աշխատանքներին (1779-1782 թթ.):

1783 թ. հուլիսի 24-ի Գեորգիևսկի դաշնագրի կնքումով աշխարհաքաղաքական իրավիճակն Այսրկովկասում կտրուկ փոխվում է հոգուտ Ռուսական կայսրության՝ խախտելով Ռուսական, Օսմանյան կայսրությունների և Իրանի տերության միջև ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում:

Ռուս-վրացական դաշնագրի 5-րդ կետով՝ կողմերը պայմանավորվում էին լիազոր ներկայացուցիչներ փոխանակել⁴⁹: Այդպես Ստ. Բուռնաշևը գնդապետի պաշտոնում նշանակվում է ծառայության Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության արքա Հերակլ Բ-ի և Իմերեթի Սողոմոն արքայի մոտ: Ռուսական ներկայացուցիչ լիազորությունները ամրագրված էին Գեորգիևսկի դաշնագրի 4-րդ կետով, համաձայն որի՝ վրաց թագավորն առանց լիազոր ներկայացուցչի «հետ նախնական համաձայնության» չէր կարող սահմանակից տիրակալների հետ հարաբերությունների մեջ մտնել: Ավելին, վրաց արքան պարտավորվում էր հարևան տիրակալներից ստացված նամակները քննարկել և նրանց բանագնացներին ընդունել միայն ռուսական լիազոր ներկայացուցչի ներկայությամբ և «խորհրդակցել» նրա հետ⁵⁰:

Հետևաբար Ստ. Բուռնաշևի կյանքում բացվում է ինք-

նադրստրման մի նոր էջ՝ նրանից պահանջելով հմուտ զինվորականի մասնագիտական որակների համադրում ճկուն դիվանագետի հմտությունների հետ: Այդ պաշտոնում նա մտնում է մինչև 1787 թ., երբ Ռուսաստանը Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորությունից դուրս է բերում իր երկու գումարտակներն ու ետ կանչում լիազոր ներկայացուցչին:

Երկրորդ ռուս-թուրքական պատերազմը (1787-1791 թթ.) Ստ. Բուռնաշևը դիմավորում է ռազմի դաշտում, իսկ Ռիմնիկի մոտ տեղի ունեցած փայլուն հաղթանակի համար (1789 թ.) նա ստանում է Ս. Գեորգիի 3-րդ աստիճանի շքանշան:

Պատերազմի ավարտին՝ 1791 թ., Ստ. Բուռնաշևը նշանակվում է Կուրսկի նահանգապետ, որտեղ «լավ կառավարելու» և ավելի քան 600 000 ռուբլի չվճարված հարկեր հավաքագրելու ու պետական գանձարան վերադարձնելու համար արժանանում է Ս. Վլադիմիրի 2-րդ աստիճանի շքանշանի⁵¹:

1797 թ. հունվարին Ստ. Բուռնաշևը Պավել Ա-ից ստանում է գաղտնի խորհրդականի նշանակում, իսկ զործարանատեր Ի. Գուշկովի ֆարիկայում ծագած դժգոհությունները հարթելու համար արժանանում է Ս. Աննայի 1-ին աստիճանի շքանշանի⁵²:

1798 թ. դեկտեմբերին Ստ. Բուռնաշևը դառնում է սենատոր՝ թողնելով նահանգապետի պաշտոնը: Սակայն 1800 թ. սեպտեմբերին պաշտոնանկ է արվում և միայն 1801 թվականին նոր կայսեր՝ Ալեքսանդր Ա-ի (1801-1825 թթ.) հրամանով վերադառնում զբաղեցրած պաշտոնին:

1801 թ. հոկտեմբերին Ստ. Բուռնաշևը վերադառնում է իր կալվածք (Կուրսկի նահանգ)՝ իրեն նվիրելով պետակա-

նույնպես կառավարման ձևի և բովանդակության մասին մտորումներին, որոնք նաև հանձնում է թղթին: Նա իր մահկանացուն կնքում է 1824 թ. մարտի 31-ին՝ կյանքի 81-րդ տարում, Կուրսկում:

Այսրկովկասում գտնվելու տարիներին Ստ. Բուռնաշևը հավաքել և գրչին էր հանձնել տարածաշրջանի քաղաքական պատմությանը վերաբերող տեղեկություններ, որոնց ակնատեսն էր ինքը: Այսպես՝ նրա «Վրաստանի պատկերը կամ Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության քաղաքական նկարագրությունը» աշխատությունը նվիրված էր Վրաստանի և հարակից տիրակալների հետ հարաբերություններին, ներքաղաքական իրավիճակին: Աշխատությունը հրատարակվել է Կուրսկում 1793թ.⁵³, ապա հետմահու՝ Թիֆլիսում 1896 թ.:

Այսրկովկասյան խանությունների և Վրաստանի քաղաքական պատմությանն է նվիրված Ստ. Բուռնաշևի «Նկարագրություն Պարսկաստանում Ադրեթիժանական նահանգների և նրանց քաղաքական կարգավիճակի» վերտառությամբ ստվարածավալ մենագրությունը, որը նույնպես լույս է տեսել 1793 թ. Կուրսկում: Սակայն նրա հետաքրքրությունների շրջանակն ուրվագծվում էր Ռուսական կայսրության ռազմաքաղաքական շահերով՝ ներառելով ողջ Կովկասը, ինչպես նաև՝ «լեռնական ժողովուրդներին», մասնավորապես կաթարդացիներին, որոնց նվիրված աշխատությունը լույս է տեսնում 1794 թ., կրկին Կուրսկում⁵⁴:

Ստ. Բուռնաշևի գրչին են պատկանում նաև մի շարք չհրատարակված նյութեր⁵⁵:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Ստ. Բուռնաշևի քարտեզագրական աշխատանքները: Վրաստա-

նում գտնվելու ընթացքում նա կազմում է տարածաշրջանին նվիրված 6 քարտեզ: Դրանցում ներկայացված երկրամասերի աշխարհագրության իմացությունն ուներ ռազմավարական և քաղաքական նշանակություն՝ միտված հեշտացնելու ռուսական զորքերի տեղաշարժը ողջ տարածաշրջանում: Այսպես՝ Ստ. Բուռնաշևը կազմել էր Մոզդոկից դեպի Թիֆլիս՝ Կովկասյան լեռներով անցնող ճանապարհի քարտեզը (1783 թ.): Տարածաշրջանում արագ կողմնորոշվելու և տեղաշարժելու համար մեծ արժեք էին ներկայացնում Կախեթի, Իմերեթի կարևոր տեղանքներն ընդգրկող հատուկ ուղեկցող քարտեզները, ինչպես նաև Քուբայիսից Թիֆլիս, Թիֆլիսից Փամբակ տանող ճանապարհների քարտեզագրումը: Նրա գրչին են պատկանում նաև վրացական թագավորությունների՝ Քարթլիի, Կախեթի, ինչպես նաև Իմերեթի թագավորության ու նրա իշխանությունների՝ Գուրիայի և Մեգրելիայի, հարակից շրջանների, Կովկասյան լեռներում ապրող ժողովուրդների գլխավոր քարտեզը (1784 թ.):

1786 թ. Ստ. Բուռնաշևը կազմում է նաև Պարսկաստանի գլխավոր քարտեզը՝ ընդգծելով նրա սահմաններում Ադրեթիժան նահանգի բոլոր տիրույթները, Իրաքի և Իրանի նախկին պետական այլ տարածքների աշխարհագրական տեղանքը:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎՎԱՍԻ ԺԸ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՏԵՊԱՆ ԲՈՒՌՆԱՇԵՎԻ
«ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿԻ

1780-ական թվականներին Ռուսաստանի արտաքին քաղաքականության կովկասյան (տվյալ դեպքում՝ այսրկովկասյան) ուղղությունը ռազմական գործողություններից ոչ պակաս լարված ու պատասխանատու պայմաններ էր խոստանում: Այդ պատճառով Այսրկովկասում ռուսական ռազմաքաղաքական շահերի ներկայացուցիչ Ստ. Բոտնաշևի լիազորություններն անհամեմատ մեծ էին: Այդ մասին է վկայում ռուսական բարձրաստիճան ղեկավարության հետ նրա գաղտնի նամակագրությունը: Այսպես՝ դեռևս 1783 թ. մայիս-հունիս ամիսներին Ստ. Բոտնաշևը վրացական երկու արքունիքներում որպես իշխան Գ. Պոտյոմկինի ներկայացուցիչ՝ «կոմիսիոներ» էր նշանակված: Նրան գաղտնի հանձնարարվում է Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության և Իմերեթի անվտանգության հարցերի ապահովության նկատառումներով կազմել դրանց նկարագրությունը⁵⁶: Իմերեթի քաղաքական իրավիճակին նա մանրամասն անդրադառնում է Վրաստանին նվիրված աշխատության մեջ՝ այդ հարցին առանձին ենթաբաժին նվիրելով⁵⁷: Հաշվի առնելով Ստ. Բոտնաշևի առաքելության կարևորությունը և Վրաստանի հեռավորությունը՝ որոշվում է նրան տարեկան լրացուցիչ 1200 ռուբլի հատկացնել⁵⁸:

Դեռևս 1783 թ. ապրիլի սկզբին իշխան Գ. Պոտյոմկին-Տավրիչեսկին Ստ. Բոտնաշևի դիվանագիտական գործունեության հաջողությունը գնահատում էր ըստ փոխանցվող լուրերի հաճախականության: Նա պահանջում էր տեղեկաց-

նել այն ամենի մասին, ինչն «օգտակար և անհրաժեշտ» կլիներ Նորին կայսերական Մեծությանը, «հատկապես»՝ հարևան իշխանությունների քաղաքական իրավիճակի վերաբերյալ⁵⁹:

Ռուսական իշխանությունները կարևորում էին Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորությունում սեփական ներկայացուցիչ ունենալու անհրաժեշտությունը նրանով, որ այդ պետության աշխարհագրական դիրքի, հարևան խաների դրության հետ քաղաքական դաշինքների, երկրի ներքին ու արտաքին իրավիճակի մասին ունեցած տվյալները ռուսական իշխանությունների մոտ սակավ էին: Այսպես՝ 1783 թ. հունիսի 16-ի հսերսոնից գրած իր նամակում իշխան Գ. Պոտյոմկինը Ստ. Բոտնաշևից պահանջում էր շտապ և մեծ ճշգրտությամբ կազմել Վրաստանի քարտեզը, հատկապես՝ թուրքական սահմանների հատվածը⁶⁰:

Ռուսական կառավարող շրջանակները մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում նաև Ճարի երկրամասում բնակվող ժողովուրդների նկատմամբ: Պ. Պոտյոմկինը 1783 թ. հոկտեմբերին գաղտնի հանձնարարություն է տալիս Ստ. Բոտնաշևին՝ ճշտել նշված ժողովուրդների աշխարհագրական տեղաբաշխումը Արևելյան Վրաստանի նկատմամբ, որքա՞ն զինված ուժ ունեն և ինչպե՞ս հնազանդեցնել նրանց⁶¹:

Ստ. Բոտնաշևը տարածաշրջանի քաղաքական դրության ներկայացումը վերնագրում է «Նկարագրություն Պարսկաստանում Ադրեբեիժանական նահանգների և նրանց քաղաքական կարգավիճակի»: Տուրք տալով պատմական հիշողությանը՝ հեղինակը, ընդգրկված տարածքների նկատմամբ օգտագործում է «Ադրեբեիժան» անվանումը: Խոսքը Սեֆյան պետության (ԺՁ-ԺԸ դարեր) չորս՝ Իրաք, Ֆարս,

Աղբերայջան և հտորասան վարչաքաղաքական ու ֆինանսական մասերի բաժանված համակարգի բաղադրիչներից մեկի՝ Աղբերայջան միավորի մասին է⁶²: Վերջինս իր մեջ էր միավորում բուն Ատրպատականի (կենտրոնը՝ Թավրիզ), Չուխուր-Սա'ադի (կենտրոնը՝ Երևան), Ղարաբաղի և Շիրվանի բեկլարբեկությունները⁶³:

ԺԸ դարի երկրորդ կեսին ռուսական կառավարության պաշտոնական գրագրություններում Արևելյան Այսրկովկասը «Աղբերիժան» եզրույթով, իսկ նրա կառավարիչներին «աղբերիժանական խաներ» կոչելը «զուտ տուրք էր պարսից հիշողությանը»⁶⁴: Ասվածի համատեքստում է նաև ԺԸ դ. երկրորդ կեսի վավերագրերում խանությունները և նրանց քաղաքները «պարսկական» կոչելը⁶⁵: Օսմանյան Արդուլ Համիդ Ա սուլթանը (1774-1789 թթ.) նույնպես Այսրկովկասը շարունակում էր կոչել «Աղբերայջան», իսկ նրա խաներին՝ «աղբերայջանական խաներ» եզրույթով⁶⁶:

Այս հանգամանից ելնելով՝ Ստ. Բուռնաշևն «աղբերիժանական խաներ» է անվանում ոչ միայն Մարաղայի, Թավրիզի, Արդեբիլի (Արդավե) կառավարիչներին, այլև Երևանի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Նախիջևանի, Գանձակի և Ղարաբաղի խաներին⁶⁷: Մինչդեռ այս հանգամանքը խորհրդային պատմագիտության մեջ թյուր ըմբռնումների աղիթ է դարձել: Այսպես՝ Վ. Լևիատովն իր «Աղբերջանի XVIII դարի պատմության ակնարկներ» (Բաքու, 1948) ռուսումնասիրության մեջ այդ փաստն օգտագործում էր հիմնավորելու համար այն դրույթը, թե իբր «Աղբերջան» պատմաաշխարհագրական եզրույթն իր մեջ ներառում էր նաև Արաքսից հյուսիս ընկած տարածքները (Խորհրդային Աղբերջանի, ներկայումս՝ Աղբերջանի Հանրապետության քաղաքական սահ-

մանները)՝ «ապահովելով», այսպես կոչված, «Հյուսիսային» և «Հարավային» Աղբերջանների գոյության ու դրանց վերամիավորվելու պատմական իրավունքի թեզը:

Ըստ Վ. Լևիատովի՝ Ստ. Բուռնաշևը հիմնվում էր ոչ թե արաբական և իրանական գրավոր աղբյուրների տեղեկությունների, այլ Աղբերջանը լավ իմացող ժամանակակիցների հաղորդումների վրա: Հետևաբար նրա աշխատանքի հիմքում իբրև թե ընկած էր «կենդանի շարադրանքը»: Այնուհետև նա եզրակացնում էր, որ արդեն այն ժամանակ, երբ Ստ. Բուռնաշևը շարադրում էր իր աշխատանքը, ժամանակակիցները նկատում էին երկու Աղբերջանների բնակիչների «էթնիկ ընդհանրությունը», որը հնարավոր է դարձնում նրանց երկու հատվածների միավորումը⁶⁸:

Խորհրդային աղբերջանական պատմագիտության այս թեզի սխալականության մասին է խոսում նաև այն փաստը, որ Ստ. Բուռնաշևի 1786 թվականին կազմած Պարսկաստանի գլխավոր քարտեզում Աղբերիժան նահանգն ընդգրկված էր իրանական պետական սահմաններում, որպես նրա վարչաքաղաքական անբաժան մաս⁶⁹: Ավելին, 1796 թվականին կոմս Վ. Ջուբովի գլխավորած Կասպիական արշավանքի մասնակից ռուսական բարձրաստիճան գինվորականները նախկին Շիրվանի բեկլարբեկության տարածքը կոչում էին «Հարավային Դաղստան» (Ղուբայի և Դերբենդի ներառմամբ)⁷⁰ կամ «Դաղստանյան Պարսկաստանի Հյուսիսային և Հարավային մասեր» (Դերբենդի, Ղուբայի, Շաքիի, Շամախիի, Բաքվի և Սալխանի ներառմամբ)⁷¹ եզրույթներով:

Վերջապես, հանդիսանալով ռուսական բարձրաստիճան գինվորական ու պետական գործիչ, Ստ. Բուռնաշևը

այսրկովկասյան իշխանությունների քաղաքական կողմնորոշման հարցում չի շրջանցում նաև թուրքական գործունը: Օսմանյան կայսրության հետաքրքրությունը իրանական պետության նախկին տարածքների նկատմամբ նա դիտարկում է 1780-ական թթ. գոյություն ունեցող ռուս-թուրքական հարաբերությունների հարթությունում: Փաստորեն նրա աշխատանքը գրվել է ժՄ դարի երկրորդ կեսի երկու ռուս-թուրքական պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում, երբ թուրքական կողմը ստիպված էր հաշտվել Քյուլուկ-Կայնարջի պայմանագրի (1774 թ.) հետ: Ավելին, 1783 թ. Գեորգիևսկի դաշնագրով ռուսական ռազմաքաղաքական դիրքերն էլ ավելի են ամրապնդվում: Սակայն քաղաքական ամենամեծ հարվածը Օսմանյան կայսրությունը ստացավ Ղրիմի խանության կորստով: Օսմանյան պետության կովկասյան քաղաքականության կովանը մնում էր Դադստանի սուննիադական ժողովուրդները (լեզգիներ, ավարներ և այլն) և այսրկովկասյան խանությունները: Աշխարհաքաղաքական բարդ տարածաշրջանում օսմանցիները շեշտը դնում են վերը նշվածների վրա՝ օգտագործելով կրոնական և դավանական նույնականությունը: Նրանց ուշադրությունից չէր վրիպել նաև Իմերեթը: Սողոմոն թագավորի մահից հետո Քուֆայիս է ժամանում օսմանյան մի աղա՝ Բարծր Դոան հովանավորությունը ճանաչել տալու նպատակով: Գեներալ-ֆելդմարշալ Գ. Պոտյոմկինը չսպասելով իմերեթական կողմի պատասխանը ստանալուն՝ 1784 թ. Ստ. Բուռնաշևին հանձնարարում է Թիֆլիսից մեկնել Քուֆայիս և հնարավոր միջոցներով պահպանել կայսերական իշխանության նկատմամբ անասանությունը⁷²:

Աշխատանքը շարադրելիս Ստ. Բուռնաշևը առաջնորդ-

վել է այն սկզբունքով, թե նկարագրված խանություններն ու իշխանությունները ինչպիսի քաղաքական դիրքորոշում ունեին Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության նկատմամբ, առևտրատնտեսական ինչ նշանակություն ունեին վերջինիս համար:

Այսրկովկասի քաղաքական պատմության շատ հարցերի վերլուծությունը հեղինակը կատարում է ելնելով Ռուսական կայսրության շահերից: Նա՝ պատմական իրադարձությունների ակնատեսն ու ակտիվ դերակատարը, համառոտ, հաճախ՝ սուբյեկտիվ, քաղաքական վերլուծություններ է կատարում՝ սուր քննադատության ենթարկելով այսրկովկասյան խաների «հակավրացական» քաղաքականությունը, երբեմն էլ՝ անձնական որակավորումներ տալով: Սակայն դրանով հանդերձ, հեղինակը, ըստ էության, չի խեղաթյուրում պատմական դեպքերն ու իրողությունները:

Ստ. Բուռնաշևը տեղի խաներին ու առաջնորդներին անվանում է «ինքնիշխան» կամ «կախյալ»՝ մատնանշելով տարածաշրջանում նրանց գրաված քաղաքական դիրքն ու կարգավիճակը: Դրանով էր պայմանավորված որևէ խանի նկատմամբ Ռուսական ու Օսմանյան կայսրությունների և Իրանի տերության դիրքորոշումը, ճշտելով, թե վերջիններս որչափ կարող էին հաշվի նստել տվյալ իշխանության գոյության փաստի և նրա քաղաքական դերակատարման հետ: Հեղինակն այսրկովկասյան «ինքնիշխան» տիրակալներին բաժանում է «հզորների» և «նվազ հզորների»՝ պայմանավորված այն հանգամանքով, թե նրանք որքան մարտիկ կարող էին ռազմի դաշտ դուրս բերել կամ լեռնական ժողովուրդներից (քնագրում՝ լեզգիներից) հավաքված որքան վարձկանների օգնությանը կարող էին դիմել:

խոսելով Դերբենդի և Ղուբայի Ֆաթի Ալի խանի մասին՝ Ստ. Բուռնաշևն իրավացիորեն նշում է, որ նա սերում է Ղայթաղի խանական տոհմից: Այս փաստը վկայում է, որ հեղինակը մեծ ճշգրտությամբ է ներկայացնում տարածաշրջանի պատմությունը՝ հետամուտ լինելով քաղաքական իրողությունների մանրակրկիտ ուսումնասիրությանը, ինչը հանդիսանում է նրա երկի պատմագիտական անուրանալի արժանիքը: Ի դեպ, Ֆաթի Ալի խանի՝ ղայթաղներից սերված լինելու մասին փաստերն անտեսվել են խորհրդային պատմագիտության կողմից: Խանի շուրջ երեք տասնամյակ ձգվող քաղաքական գործունեության համար աղբյուրանական խորհրդային պատմագիտությունը նրան կոչում էր «հայրենի երկրի միավորման մարտիկ», «Ադրբեջանի ազգային միավորման համար պայքարող մարտիկ»⁷³: Իրականում Ղուբայի խանը խելացի և հմուտ դիվանագետ-տիրակալ էր, որի գերագույն խնդիրն էր քաղաքական գերիշխանություն հաստատել Արևելյան Այսրկովկասի, ապա ողջ Այսրկովկասի և անգամ՝ Իրանի տերության նկատմամբ: Պարզ է, որ Ֆաթի Ալին որևէ կապ չունի այսօրվա ընկալմամբ «ադրբեջանցիներ» էթնիկ հանրության հետ:

Ստ. Բուռնաշևի լեզուն հստակ է, խոսքը՝ լակոնիկ: Նա իր մտքերը շարադրել է գինվորականին հատուկ հակիրճ ոճով, առանց այլաբանությունների: Այդ առումով նրա աշխատությունն էապես տարբերվում է ժամանակաշրջանի ճանապարհորդների, գիտական արշավախմբերի, առևտրական գործակալների կատարած գրառումներից և զերծ է գրական զեղումներից: Սակայն դրանով հանդերձ նրան հաջողվել է փոքրածավալ երկի շրջանակներում գրեթե ամ-

բողջությամբ ներկայացնել տարածաշրջանի քաղաքական պատմությունը:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ գտնվելով Թիֆլիսում՝ Ստ. Բուռնաշևը կարողացել է մեծ ճշգրտությամբ հաղորդել տարածաշրջանի քաղաքական պատմությանը, խաների փոխհարաբերություններին, ինչպես նաև տարածաշրջանի խոշոր պետությունների նկատմամբ նրանց քաղաքական դիրքորոշումներին վերաբերող մանրամասներ: Աշխատանքը շարադրելիս նա չի բացահայտում իր աղբյուրները: Սակայն, եթե նկատի ունենանք, որ այս երկը քաղաքագիտական է, այլ ոչ թե պատմագրական, ապա պետք է ենթադրել, որ նրա համար տեղեկատվական հիմք են հանդիսացել լուստական լայն ցանցի հաղորդումները: Օրինակ, այդպիսի մի աղբյուրի՝ Ուրմիայից Թիֆլիս ժամանած ասորի երիտասարդի մասին էր կայսրուհուն գրում Գ. Պոտյոմկինը⁷⁴:

Ըստ Ստ. Բուռնաշևի՝ Հերակլ Բ արքան ցանկացած պահի կարող էր անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ Օսմանյան կայսրություն ուղարկվող վանականների և սուլթանի հարեմում գտնվող վոացուհիների միջոցով⁷⁵: Ասվածի համատեքստում են նաև Իրանում գտնվող խաների և կառավարիչների մասին նրա փոխանցած տեղեկությունները, որոնք այսօր հնարավոր է ճշտել իրանական աղբյուրների օգնությամբ:

Ստ. Բուռնաշևի երկն առավելապես լուսաբանում է քաղաքական իրադարձությունները և, որպես գինվորական, հեղինակն իր ուշադրության կենտրոնում է պահում Այսրկովկասի խանությունների գինված ուժերի մասին տեղեկատվությունը:

Խանութիւնների քաղաքական իրավիճակի համառոտ ներկայացմանը զուգահեռ Ստ. Բոտնաշևն ընդհանուր պատկերացում է տալիս Հարավարևելյան Կովկասում բնակվող քրիստոնյաների տների թվաքանակի մասին: Ըստ նրա՝ Դերբենդի, Ղարաբաղի, Շաքիի, Շամախիի, Երևանի, Նախիջևանի և Ղարաղաղի խանութիւններում բնակվող քրիստոնյաների քանակը կազմում էր 17800 տուն:

Ինչպես վերը նշվեց, Ստ. Բոտնաշևի երկը տարբերվում է ժամանակաշրջանի այլ հետազոտողների և գինվորականների աշխատություններից իր զուտ քաղաքական նկարագրությամբ: Ուստի քրիստոնյաների՝ հայերի, մասին տեղեկությունները պայմանավորված էին ռուսական պետության համար տարածաշրջանում հուսալի էթնիկ տարրի կարևորությամբ: Կրկնենք, որ քրիստոնյաների առկայությունն Այսրկովկասում ԺԸ դ. երկրորդ կեսին դիտարկվում էր ռուսական ռազմաքաղաքական շահերի համատեքստում:

Հավելենք, որ Ստ. Բոտնաշևի աշխատությունը շարադրվել է Եկատերինա Բ կայսրուհու հանձնարարությամբ, որպես Այսրկովկասում հեղինակի գտնվելու քաղաքական ու դիվանագիտական գործունեության բաղկացուցիչ մաս և նրա վրա դրված «առաքելության» ավարտական լուծում:

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊՐՍՍԿԱՍՏԱՆՈՒՄ ԱԴԻԵԲԻԺԱՆԱԿԱՆ
ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ՝

ԿԱՏԱՐՎԱԾ

ՔԱՐԹԼԻԻ ԵՎ ԿԱԽԵԹԻ ԱՐՔԱ ՆՈՐԻՆ
ՄԵՇՈՒԹՅՈՒՆ ԹԵՅՄՈՒՐԱԶԻ ՈՐԴԻ ՀԵՐԱԿԼԻ ՄՈՏ
ԳՏԵՎՈՂ ԳՆԴԱՊԵՏ ԵՎ ԿԱՎԱԼԵՐ ԲՈՒՌՆԱՇԵՎԻ
ԿՈՂՄԻՑ 1786 ԹՎԱԿԱՆԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

ԿՈՒՐՍԿ - 1793

ԱԴՐԵՔԻԺԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ [ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ] ԲԱԺԱՆՈՒՄԸ

Ադրեքիժան⁷⁶ անվամբ հայտնի տարածքի ներկայիս դրության մասին, որին հյուսիսից սահմանակից են Վրաստանը, այսինքն՝ Քարթլիի և Կախեթի թագավորությունը⁷⁷ (թեպետ նրանք ևս մինչ այդ ադրեքիժանական հողերի կազմի մեջ էին մտնում), արևելքից՝ Կասպից ծովը և Գիլանի նահանգը, հարավից՝ Արաքի շրջանը, իսկ արևմուտքից՝ Թուրքիան:

1. **Դերքենդի** իշխանությունը թեպետ իր [աշխարհագրական] դիրքով պետք է համարվեր Դաղստանի տարածքը, սակայն, քանի որ Դերքենդ քաղաքը⁷⁸ 450 տարի առաջ գրավվել է պարսիկների կողմից⁷⁹ և նրանց իշխանությունը Նադիր շահի օրոք լիովին հաստատվեց [այստեղ], իսկ նրա ներկայիս կառավարիչ Ֆաթի Ալի խանը՝ Ադրեքիժանում տիրում է Բաքու և Սալիան⁸⁰ քաղաքներին և շատ այլ բնակավայրերի⁸¹, ապա Դերքենդի տիրակալը ևս համարվում է ադրեքիժանական խաներից մեկը:

Հնարավոր չէ որոշել **Դերքենդի** հողերի սահմանները, որպես իրենց դիրքով ինչպե՛ս Դաղստանին կից և Կասպից ծովի երկայնքով մինչև Շիրվանի սահմանները հասնող, այնպե՛ս էլ դեպի երկրի խորքը ձգվող Կովկասյան լեռների ուղղությամբ և Բաքու քաղաքի ու Սալիանի շրջակայքը [ձգվող] հավասարապես: Դերքենդցիների մոտ հարևանների հետ չընդհատվող պատերազմների պատճառով դրանք ևս ընդարձակվում ու նեղանում են ըստ [ուզման] հաջողությունների:

Ադրեքիժանական տիրակալներին կարելի է առանձնացնել որպես ինքնիշխանների և կախյալների, իսկ առաջիններին՝ հզորների և նվազ հզորների:

Դերքենդի կամ Ղուբայի խանը [խաների մեջ] հզորներից է: Նրան բավականին հարուստ են համարում: Նրա [ուզման] ուժը կազմում է 3000 մարդ: Սակայն իր հարեվանների դեմ [նախապատրաստվող] կարևոր ձեռնարկումների ժամանակ⁸² նա դիմում է ադրեքիժանական իրեն մոտ գտնվող մերձավոր խաների՝ Նուվսիի⁸³, Շիրվանի և Շուշիի, Դաղստանի տիրակալների ու թափառական լեզգիների օգնությանը: [Նա] Ղազիղումուխի (Կազիկումուխի)⁸⁴ Մուհամմադ (Մահմատ) խանի և [Թարքիի] շամխալ⁸⁵ Մուրթուզա Ալիի հետ դաշինքի մեջ է⁸⁶: Ավարիայի Ումմա կամ Օմար խանի⁸⁷ և Շուշիի Իբրահիմ խանի անհաշտ թշնամին է: Նուվսիի և Շամախիի խաների հետ ժամանակ առ ժամանակ ընդհարումներ է ունենում և, կախված հանգամանքներից, կարողանում է վերջիններիս ճնշել:

Հերակլ [Վրաց] արքայի հետ հազվադեպ է շփում ունենում և քանի որ Վրաստանից [բավականին] հեռավորության վրա է գտնվում, փոխադարձ անհամաձայնությունների պատճառ չկա: Հետևաբար չի կարելի խոսել նրանց [միջև] առանձնահատուկ թշնամանքի, կամ բարեկամության [գոյության] մասին:

Ընդհանուր առմամբ ադրեքիժանական բոլոր ինքնիշխան խաները միևնույն վերաբերմունքն ունեն ոռոսական կողմի նկատմամբ: Նրանք վախենում են, որ Ռուսաստանի ուժը կզրկի իրենց ինքնիշխանությունից կամ ավելի ճիշտ՝ ինքնուրույնությունից և դրա հետ միասին կառավարման եվրոպական ձևը մոտք կգործի իրենց սահմանները: Այս

 нѣкоторыми изъ вышеписан-
 ныхъ имѣнъ по времени и
 своею силою поержию власть.

Въ Коросанъ.

- Матадъ - - Шарухшахъ потомокъ Шахъ-
 надира.
 Турши - - Абула-ханъ.

Въ Шушистанъ.

- Лорестанъ - - Владѣлецъ съ пшпуромъ
 Царешъ.

Въ Фарсистанъ.

- Ширакъ - - Венсъ-муратъ-ханъ-Зангъ.
 Въ Курдистанъ - - Валъ-Хорсой-ханъ.

К О Н Е Ц Ъ.



ՄԱՆՈՁԱԳՐՈՒԹՅՈՒՆԼԵՐ

- ¹ **С. Бунашев**, Описание областей Адрибиджанских в Персии и их политического состояния, Курск, 1793.
- ² **Дж. Белл**, Путешествия чрез Россию в разные азиатские земли, а именно: Испаган, в Пекин, в Дербент и Константинополь, Перевел с французского **Михайло Попов**, ч. I, СПб., 1776, с. 34.
- ³ Անդ, էջ 59:
- ⁴ Անդ, էջ 58:
- ⁵ Անդ, էջ 67:
- ⁶ **И. Гербер**, Известия о находящихся с западной стороны Каспийского моря между Астраханью и рекой Курой народах и землях и о их состоянии в 1728 г., Сочинения и переводы к пользе и увеселению служащих, СПб., 1760, т. II, Июль-октябрь; նոյնի՝ Описание стран и народов западного берега Каспийского моря. 1728 г., История, география и этнография Дагестана XVIII-XIX вв., Архивные материалы, Под ред. **М. О. Косвена** и **Х. М. Хашаева**, Москва, 1958, с. 60-120.
- ⁷ Известия о втором путешествии доктора коллежского советника Лерха в Персию от 1745 до 1747 года, – «Новые ежемесячные сочинения», ч. XLVIII, Июнь, СПб., 1790, с. 81-82.
- ⁸ Մանրամասն տե՛ս **Գ. Մխիթարյան**, Արևելյան Այսրկովկասի վարչաքաղաքական միավորները ժԸ դարի երկրորդ կեսին, եր., 2018:
- ⁹ Հմմ. A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII centuries, vol. 1, London, 1939, p. 662.
- ¹⁰ Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte **Ferrières de Saubeboef** faits en Turquie, en Perse et en Arabie depuis 1782 jusqu'en 1789, vol. 1, Maastricht, 1790, p. 289.
- ¹¹ Տե՛ս, օր.¹ **С. Гмелин**, Путешествие по России для исследования

- трех царств естества, часть III, I пол., СПб., 1785; **Ф. Симонович**, Описание Южного Дагестана. 1796 г.; **Н. Дренякин**, Описание Ширвана. 1796 г.; **П. Бутков**, Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде писем». 1796 г.; նոյնի՝ Сведения о кубинском и дербентском владениях. 1798 г.; **А. Ахвердов**, Описание Дагестана. 1804 г.; **А. Серебров**, Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. **М. О. Косвена** и **Х. М. Хашаева**, Москва, 1958 (հիշխում՝ ИГЭД), с. 138-156, 157-172, 173-190, 200-212, 213-229; **М. Чулков**, Историческое описание российской коммерции при всех портах и границах от древних времен до ныне настоящего и всех преимущественных узаконений по оной государя императора Петра Великого и ныне благополучно царствующей государыни императрицы Екатерины Великой, т. II, кн. II, Москва, 1785.
- ¹² Մանրամասն տե՛ս **Գ. Մխիթարյան**, Ս. Գմելինի ճանաչարհորդությունն Արևելյան Այսրկովկաս և Իրանի հյուսիսային շրջաններ, – Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հտ. XXXI, եր., 2018, էջ 76-87:
- ¹³ **S.-G. Gmelin**, Reise durch Russland zur Untersuchung der drei Natur-Reiche, SPb., 1770-1784.
- ¹⁴ **С. Гмелин**, Путешествие по России для исследования трех царств естества, СПб., 1771-1785.
- ¹⁵ «Физическая» экспедиция академика С. Гмелина 1768-1774 гг., СПФ АРАН, ф. 3, оп. 34.
- ¹⁶ **J. Georgi**, Beschreibung aller Nationen des Russischen Reichs, ihrer Lebensart, Religion, Gebräuche, Wohnungen, Kleidung und übrigen Merkwürdigkeiten, St. Peterburg, 1776-1780.
- ¹⁷ **И. Георги**, Описание всех в Российском государстве обитающих народов, также их житейских обрядов, вер, обыкновений, жи-

лиц, одежда и прочих достопамятностей. Ч. II. О народах татарского племени и других нерешенного еще происхождения северных сибирских, СПб., 1776-1799.

¹⁸ Շնդ, հոկ. 4, 1799, էջ 45-54:

¹⁹ Ղաջարների մասին տե՛ս **И. П. Петрушевский**, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв., Ленинград, 1949, с. 91; Don Juan of Persia, A Shah Catholic 1560-1604. Translated and edited by **G. Le Strange**, London 1926. p. 46; **J. Perry**, The Zand Dynasty (1747-1779), London, 2006, p. 106-108.

²⁰ Դաշնագրի ամբողջական բնագիրը տե՛ս Собрание законов Российской Империи (հետխյուր՝ ПСЗРИ), Собрание первое, 1649-1825 гг., Под ред. **М. М. Сперанского**, СПб., 1830, т. XXI, с. 1013-1017.

²¹ Տե՛ս **Н. Княпина**, Кавказ и Средняя Азия во внешней политике России, Москва, 1984, с. 49-51.

²² Տե՛ս, օր.՝ **F. Kazemzadeh**, Iranian relations with Russia and the Soviet Union, to 1921, – The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, vol. VII, Cambridge, 1991, p. 325.

²³ Շնդ, էջ 328:

²⁴ РГВИА, ф. 52, оп. 1, № 29, лл. 56-56 об.

²⁵ Հմմ. **В. Дегоев**, Большая игра на Кавказе, Москва, 2003, с. 26.

²⁶ Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, бывшего в Грузии с 1783 по 1787 г., Под ред. **А. А. Цагарели**, СПб., 1901, с. 6.

²⁷ Հմմ. **С. Жигарев**, Русская политика в Восточном вопросе (ее история в XVI-XIX веках, критическая оценка и будущие задачи), Москва, 1896, с. 225.

²⁸ РГВИА, ф. 52, оп. 1, № 29, л. 56 об.

²⁹ **П. Бутков**, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., т. 2, СПб, 1869, с. 144.

³⁰ Շնդ, էջ 134-135:

³¹ **О. П. Маркова**, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966, с. 179.

³² Տե՛ս **Г. Цинцадзе**, Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791) – «Исторический вестник», № 23-24, Архивное управление при совете министров Груз. ССР, Тбилиси, 1970, с. 20.

³³ Տե՛ս **С. Бурнашев**, Описание областей Адребиканских в Персии и их политического состояния, Курск, 1793.

³⁴ Հմմ. **Գ. Մխիթարյան**, Ստ. Բունաշևի «Նկարագրություն Պարսկաստանում Ադրեբեջանական նահանգների...» երկը՝ Այսրկովկասի ԺԸ դարի պատմության աղբյուր, – Հայաստանը և արևելաքրիտոնեական քաղաքակրթությունը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Բրիտտոնյա Արևելքի բաժնի ստեղծման 40-ամյակին և նրա հիմնադիր, պրոֆ. Պարոյր Մուրադյանի մահվան 5-րդ տարեիցին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2016, էջ 174-182:

³⁵ Այստեղ պետք է հասկանալ Այսրկովկասի կիսանկախ խանությունները:

³⁶ **С. Бурнашев**, Картина Грузии или описание политического состояния царств Карталинского и Кахетинского, сделанное, пребывающим при его высочестве царе Карталинском и Кахетинском Ираклии Темурозовиче полковником и кавалером **Бурнашевым** в Тифлисе, в 1786 г., Курск, 1793, с. 3.

³⁷ **Ф. Симонович**, Описание Южного Дагестана. 1796 г.; **Н. Дренякин**, Описание Ширвана. 1796 г.; **П. Бутков**, Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде писем». 1796 г.; նույնի՝ Сведения о кубинском и дербентском владениях. 1798 г.; **А. Ахвердов**, Описание Дагестана. 1804 г.; **А. Сереб-**

- ров, Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., История, география и этнография Дагестана XVIII-XIX вв., Архивные материалы, Под ред. М. О. Косвена и Х. М. Хашаева, Москва, 1958, с. 138-156, 157-172, 173-190, 200-212, 213-229.
- ³⁸ История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. М. О. Косвена и Х. М. Хашаева, Москва, 1958.
- ³⁹ ԺԸ-ԺԹ դդ. ոռայական աղբյուրներում պատմական Շիրվանի տարածքները կոչում էին «Հարավային Դաղստան» և «Հյուսիսային Պարսկաստան» եզրերով:
- ⁴⁰ Бумаги относящиеся к Персидскому походу 1795 и 1796 гг., СПФ АРАН, ф. 99, оп. 2, N 14.
- ⁴¹ Գ. Մխիթարյան, Արևելյան Այրևուդկասի վարչաքաղաքական միավորները ժԸ դարի երկրորդ կեսին, Եր., 2018:
- ⁴² Կենսագրական տվյալների համար հիմք են ընդունված հեղինակի 1799 թվականին գրած և Պավել Ա կայսերը ներկայացրած համառոտ ինքնակենսագրականը (Записка о службе тайного советника и сенатора С. Д. Бурнашева, – Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, бывшего в Грузии с 1783 по 1787 г., Собрал и издал С. Н. Бурнашев, Под ред., А. А. Цагарели, СПб., 1901): Սակայն «Նոր կյուբեր 1783-ից 1787 թվականներին Վրաստանում գտնվող Ա. Դ. Բուռնաշևի կյանքի և գործունեության համար» վերառառությամբ աշխատությունը հրատարակելու ժամանակ խմբագրությունը կատարել էր կենսագրական լրացումներ, որոնք ամբողջացնում էին Ա. Բուռնաշևի կյանքն ու գործունեությունը (տե՛ս Ծանոթությունները կապակցված էջերում):
- Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, бывшего в Грузии с 1783 по 1787 г.), Տե՛ս նաև **М. Полиевктов**, Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу, Тифлис, 1935, с. 24-26.

- ⁴³ Общий гербовник дворянских родов всероссийской империи, начатый в 1797 году, ч. 4, Гатчино, 1799, с. 119-120.
- ⁴⁴ **Князь Щербатов М. М.**, История Российской от древнейших времен, т. 4, кн. 2, СПб., 1783, с. 395.
- ⁴⁵ Дополнение к актам историческим, собранные и изданные археографическою комиссиею, т. 3, СПб., 1848, с. 204.
- ⁴⁶ Записка о службе тайного советника и сенатора С. Д. Бурнашева, с. 41.
- ⁴⁷ Թշնամու կրակահերթի տակ Ստ. Բուռնաշևին հաջողվում է մոտենալ Արրատին և չափազրույթներ կատարել: Նա կարողանում է ստեղծել ամբողջ գրավելու աստիճաններ և նույն զիշերն այն գրավել (տե՛ս անդ, էջ 44):
- ⁴⁸ Անդ, էջ 45:
- ⁴⁹ Полное Собрание Законов Российской Империи (հետախյու՛մ՝ ПСЗРИ). Собрание первое, 1649-1825 гг., Под ред. **М. М. Сперанского**, т. 21, СПб., 1830, с. 1015.
- ⁵⁰ Անդ :
- ⁵¹ Записка о службе тайного советника и сенатора С. Д. Бурнашева, с. 48.
- ⁵² Անդ, էջ 49:
- ⁵³ Տե՛ս ծնթ. 33:
- ⁵⁴ **С. Бурнашев**, Описание горских народов, Курск, 1794.
- ⁵⁵ Տե՛ս Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, бывшего в Грузии с 1783 по 1787 г., с. 53-54.
- ⁵⁶ Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, бывшего в Грузии с 1783 по 1787 г., с. 1.
- ⁵⁷ **С. Бурнашев**, Картина Грузии, с. 32-38.
- ⁵⁸ Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, бывшего в Грузии с 1783 по 1787 г., с. 2.
- ⁵⁹ Անդ:

⁶⁰ Իշխանի հանձնարարականները նույն էին նաև Իսբերքի հարցում (տե՛ս Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, бывшего в Грузии с 1783 по 1787 г., с. 3).

⁶¹ Անդ, էջ 11:

⁶² Tadhkirat al-muluk: A Manual of Safavid Administration (circa 1137/1725), Persian text in facsimile (B. M., Or. 9496), Translated and explained by V. Minorsky, London, 1943, p. 162.

⁶³ Անդ, էջ 164-168:

⁶⁴ Հմմ. Պ. Չորանյան, Հայ-ոսու-վրացական հարաբերությունները ժԸ դարի երկրորդ կեսին, Վաղարշապատ - Ս. Էջմիածին, 2006, էջ 34:

⁶⁵ ԲԳՎԱ, ֆ. 52, օպ. 1/194, ժ. 270, և. 41 օձ.

⁶⁶ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Կովկասում և մասնավորապես պատմական Հայաստանում XVI դ. երկրորդ կեսից), Թուրքական պատմագիտությունը սկզբից մինչև XVIII դարի վերջերը, հտ. Ա, կազմեց՝ Ա. Խ. Սաֆրաստյան, Եր., 1961, էջ 229:

⁶⁷ С. Бурнашев, Описание областей Адребиджанских в Персии и их политического состояния, Курск, 1793.

⁶⁸ В. Левиатов, Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку, 1948, с. 144-145.

⁶⁹ Генеральная карта Персии с показанием границ, главных ее разделений, больших дорог, всех владений в Адребиджане, всех владельческих городов в Араке и некоторых других областях. Сочинена полковником и кавалером Бурнашевым в Тифлисе в 1786 году.

⁷⁰ Ф. Симонович, Описание Южного Дагестана. 1796 г., - ИГЭД, с. 138.

⁷¹ А. Серебров, Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., - ИГЭД, с. 173.

⁷² ԲԳՎԱ, ֆ. 52, օպ. 1, № 29, և. 56 օձ - 57.

⁷³ П. Валуев, Фатали-хан Кубинский, Баку, 1942, с. 4.

⁷⁴ ԲԳՎԱ, ֆ. 52, օպ. 1, № 29, և. 57.

⁷⁵ С. Бурнашев, Картина Грузии, с. 24.

⁷⁶ Ըստ ժԳ դարի արար աշխարհագիր Յակոտ ալ-Համափի՝ «Ադերբայջան» (Ադրարիջան) երկրանունը «ծագում է «Ադր»-ից, որը պահպանվել է նշանակում է կրակ և «Քայջան»-ից, որի իմաստն է՝ պահպանել կամ մթերող, նույն լեզվով: Ուրեմն՝ նշանակում է կրակի տուն կամ կրակի շրջնարան, և ինձ թվում է, թե այս է ուղիղ մեկնաբանությունը, որովհետև այդ կողմերում շատ կրակատներ կային»: Ադերբայջանը սահմանակից էր Պարտավ, Արզնջան, Դայլամ, Ջիլի և Թարմի «երկրներին», իսկ ամենահայտնի և ամենամեծ քաղաքը Թավրիզն էր: «Ժողովուրդը գեղադեմ է, կարմրայտ ու նրբակազմ, խոտում է «ագրիե» լեզվով, որն իրենցից դուրս ոչ ոք չի հասկանում», - գրում է ալ-Համափին (տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ Հ. Նալբանդյան, Եր., 1965, էջ 10):

⁷⁷ Մինչև ժԸ դարի 40-ական թթ. Քարթլիի և Կախեթի իշխանությունները գտնվում էին հարևան իշխանությունների հետ ալյուրահեղ կոփվերի մեջ: 1744 թ. Նադիր շահը Թեյմուրազ Բ-ին և նրա որդի Հերակլին ճանաչեց համապատասխանաբար Քարթլիի ու Կախեթի թագավորներ՝ փաստացի կառավարումը կենտրոնացնելով մեկ ընտանիքի ձեռքում: 1748-1750 թթ. Կրաստանից իրենց կախվածությունը ճանաչեցին Երևանի, Նախիջևանի և Գանձակի խաները՝ պարտավորվելով հարկ վճարել (տե՛ս История Грузии, Ред. колл. Н. А. Бердзенивили и др., т. 1, С древнейших времен до 60-х годов XIX века, Тбилиси, 1962, с. 357-358. հմմ. С. Бурнашев, Картина Грузии, с.

19). 1762 թ. հոր մահից հետո Հերակլ Բ-ն միավորում է երկու թագավորությունները՝ իրեն հռչակելով Արևելավրացական թագավորության արքա: Իրանի կառավարիչ Քերիմ խան Ջենը ճանաչում է նրա իշխանությունը և հաստատում Երևանի ու Գանձակի նկատմամբ նրա իրավունքները (История Грузии, с. 363; հմմ. **С. Бурнашев**, Картина Грузии, с. 20).

⁷⁸ Դերբենդի մասին Յակոտ ալ-Համավին գրում է, որ այն ամուր կառուցված ու հարուստ հիմքեր ունեցող քաղաք էր և հիմնադրվել էր Անուշիրվան արքայի օրոք: «Նրա հարակից լեռնաշղթայի վրա 70-ից ավելի ցեղեր էին ապում և յուրաքանչյուր ցեղ իր լեզուն ունի», – գրում է աշխարհագիրը (Օտար աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ **Հ. Նախընդյան**, էջ 24):

⁷⁹ Նկատի ունի Սեֆյան Իրանի կողմից 1538 թ. Շիրվանի նվաճումը (որի կազմում էր նաև Դերբենդը), կամ էլ դրանից ավելի վաղ մի նվաճում: Քաղաքի պատմամշակութային անցյալի մասին վերջին անգամ տե՛ս **М. Гаджиев**, Дербент – памятник мировой истории и культуры, – Вестник института истории, археологии и этнографии, 2015, № 1 (41), Махачкала, 2015, с. 5–20.

* Պարսից շահերից Սալխանի տիրակալ ճանաչված [Ֆաթի Ալի խանը] ծնունդով Ղայթաղի խաների տոհմից է:

⁸⁰ Սալխանը գտնվում է Ալաշերտի թերակղզուց հարավ-արևմուտք, Կուրի ափին և հայկական աղբյուրներում հայտնի է «շահաստան միանգամայն ի կողմնէ ձկանց» անվամբ (տե՛ս Ճանապարհորդութիւնս ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ տեսանո **Սարգսի Սահահեցոյ Ջալալեանցի**՝ թեմակալ արքեպիսկոպոսի Հայրց, Վրաստանի, Իմերեթի և այլոց, մասն Բ, Տփլիս, 1858, էջ 367):

⁸¹ Նախքան Դերբենդի խանութան գրավումը Ֆաթի Ալի խանը Ղուբային էր միացրել Սամուր գետի աջափնյա Մուսկուր, Նի-

զարաղ, Շարբան, Ռուստաու և Բեշբարմակ բնակավայրերը (տե՛ս **Е. Козубский**, История города Дербента, Темир-Хан-Шыра, 1906, с. 92).

⁸² Նկատի ունի՝ ռազմական գործողությունների ժամանակ:

⁸³ Իմա՛ Շարիի:

⁸⁴ Ըստ ավանդության՝ Ղազիղումուխի շամխալությունը հիմնել էին արաբները Ը դարում, և այն իր գոյությունը պահպանել էր մինչև ԺԷ դարը: Ավատատիրական կոիվների հետևանքով 1642 թ. Սուրխայ շամխալն իր նստավայրն է դարձնում Թարքին, իսկ Ղազի-Ղումուխ բնակավայրում կառավարիչ է ընտրվում Ալիբեկ Բ-ն, որն էլ հիմնադրում է ինքնուրույն իշխանություն՝ խանություն: Այսպիսով՝ շամխալի տիտղոսը պահպանում են Թարքիի կառավարիչները: ԺԸ դարում Ղազիղումուխի խանությունը Սեֆյան Իրանի վարչաքաղաքական մաս է կազմում: Շամխալի ազդեցությունը հարևան ժողովուրդների վրա միշտ մեծ է եղել:

⁸⁵ Թարքիի շամխալությունը ձևավորվել էր 1640-ական թթ. (տե՛ս Նախորդ ծնթ.): ԺԸ դ. երկրորդ կեսին, շնորհիվ լեռնային բարձր դիրքի, Թարքին չուներ պաշտպանական որևէ շինություն: Շամխալի տարեկան եկամուտը 5000 ոտրփի էր կազմում: Քաղաքի 300 տուն բնակչությունից կարելի էր 3000 հեծյալ զինվոր հավաքագրել (ինչը, թերևս, կասկածելի է): Ռազմական գործողությունների ժամանակ անհրաժեշտության դեպքում ավարից բացի հետևակային զինվորին 50, իսկ հեծյալին՝ 100 ոտրփի վճարելու պայմանով շամխալը կարողանում էր լեռնականներից մինչև 20000 զինված ձիավոր հավաքել (СНФ АРАН, ф. 99, оп. 2, № 13, л. 19–20).

⁸⁶ Շամխալ Էսազուլատի մահից հետո (1773 թ.) նրա կտակի համաձայն՝ իշխանությունն անցնում է իր քրոջ որդուն՝ Մուրթուզա Ալիին: Դա զայրույթ է առաջացնում շամխալների տոհմում: Շամխալի պաշտոնի հավակնորդներից Կազմեիշի տիրակալ Մուհամմադը Ղայթաղի Ամիր Համզայի, Ավարիայի Մուցալ

խանի, Էնդերեի տիրակալի հետ Թարքիից հեռացնում է Մուրթուզա Ալիին և շամալա հռչակվում: Մեկ ամիս անց Մուրթուզա Ալին Ղուրայի Ֆաթի Ալի խանի և այլ դադստանցիների օգնությամբ վերադարձնում է շամալությունը (տե՛ս История Дагестана, Отв. ред. В. Г. Гаджиев, т. I, Москва, 1967, с. 323):

⁸⁷ Ավար խանը ԺԸ երկրորդ կեսին կարող էր ռազմի դաշտ հանել մինչև 10000 զինվոր (СПФ АРАН, ф. 99, оп. 2, № 13, л. 40):

⁸⁸ Հայտնի է, որ 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում օսմանյան սուլթանը փող և նվերներ է խոստանում դադստանյան տիրակալներին ու Ֆաթի Ալի խանին՝ խնդրելով հանուն հավատի աջակցել թուրքերին, և հավանություն է ստանում (АВПРИ, ф. Сношение России с Персией, 1771, д. 150, лл. 10-12):

⁸⁹ Խաների քաղաքական կեցվածքն ավելի քան կանխատեսելի էր, քանի որ Արևելյան Այսրկովկասի կիսանկախ խանությունների տիրակալների համար օրակարգային խնդիր էր սեփական անվտանգության ապահովումը: Վերադարձը իրանական պետական համակարգ սպառնում էր կարգավիճակի կորստով: Հեռավոր և նույն կրոնը դավանող Կոստանդնուպոլսի գերագույն իշխանության ճանաչումն առավել նախընտրելի էր: Գեներալ Ի. դը Մեդեմին ներկայացրած զեկուցագրում Ղզալի պարետ Ի. Ֆոն-Շտեռնդերը նշում էր, որ դադստանյան տիրակալները հնարավորության դեպքում կպաշտպանեն թուրքական կողմին, բացառությամբ Ֆաթի Ալի խանի, որը կարող էր հավատարիմ լինել Ռուսաստանին: Նա ընդգծում էր Ղուրայի խանի՝ մյուս տիրակալներից դավանանքով տարբեր (ինձ՝ շիա) լինելու հանգամանքը: Տե՛ս Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в. Сб. документов, Отв. ред. В. Гаджиев, Москва, 1988 (հետալստ՝ РДО), с. 154. Աստրախանցի վաճառական Մ. Կնյազևը, հղում կատարելով տեղացի հայերին և

պարսիկներին, 1770 թ. նոյեմբերին հյուպատոս Մ. Սուլակովի հաղորդում էր, որ Ֆաթի Ալի խանը լեռնականների սիրաշահելու նպատակով դարձել էր սուննիադական (АВПРИ, ф. Сношение России с Персией, 1771, д. 150, лл. 11 об. – 12):

⁹⁰ Խոսքը Այսրկովկասի մասին է:

⁹¹ Ստ. Բոունաշևը նկատի ունի Քյուլուկ-Կայնարջիի հաշտության պայմանագիրը (1774 թ.): Վերջինիս ամրոցական բնագիրը տե՛ս Собрание важнейших трактатов и конвенций, заключенных Россией с иностранными державами (1774-1906). С введением и примечанием профессора В. Н. Александренко, Варшава, 1906, с. 1-10:

⁹² Հելինակը նկատի ունի լեզգիների ասպատակություններն ու թախանը Վրաստանի սահմանամերձ շրջաններում: Այդ համատեքստում է պետք դիտարկել նաև Ճար-Բելոկանի շրջանում ապրող լեզգիների (ելերի) վարքագիծը:

⁹³ Խոսքը զինվորական պարտավորությունների մասին է. ենթատեքստից երևում է, որ այդ մահմեդական ժողովուրդները, ժամանակ առ ժամանակ վրաց արքայի դեմ ըմբոստանալով, պահանջվող զորքը չէին ուղարկում:

⁹⁴ Քանի որ Ֆաթի Ալի խանի տիրույթները Կասպից ծովի առափնյա շրջաններում էին, թուրքական կողմը 1768-1774 թթ. պատերազմի ընթացքում նրանից պահանջում էր արգելել ռուսական զորքի տեղաշարժը ծովով ու ցամաքով՝ հանուն սեփական անվտանգության և «ընդհանուր օրենքի»: Տե՛ս Армяно-руссские отношения в XVIII веке. 1760-1800 гг., Сб. документов, Под ред. М. Нерсисяна, Ер., 1990, с. 83:

⁹⁵ Ա. Սուվորովը նույնպես սուր գնահատական էր տալիս Ֆաթի Ալի խանին՝ նրան անվանելով «ոչ ազնվական վարքագիծ» ունեցող: Խանի տարեկան եկամուտը կազմում էր 30000 ռուբլի՝ հնարավորություն տալով մինչև 8000 վարձու լեռնական զինվոր ունենալ (СПФ АРАН, ф. 99, оп. 2, № 13, л. 22):

⁹⁶ Նշենք, որ 1780-ական թթ. կեսերին Աղա Մուհամմադ խան Ղաջարին հաջողվում է իրեն ենթարկել Ապահանը և հայացքն ուղղել դեպի Այսրկովկաս (տե՛ս **Ferrieres de Sauveboeuf**, նշվ. աշխ., vol. II, p. 296-298): Դա Ֆաթհ Ալի խանին ստիպում է կայսերական հովանավորություն ստանալու խնդրանքով դիմել ռուսական իշխանություններին (տե՛ս Сборник Императорского русского исторического общества /Историкум/ СИРИО/, т. 47, СПб., 1885, с. 193).

⁹⁷ Դերբենդ քաղաքը՝ «Աղուանից երկրի նախադուռը» (**Մ. եպ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր և դրացիք /Միջին Դաղուանս/, Թիֆլիս, 1893, էջ 110), գտնվում էր Ջալգան լեռան ստորոտին, ծովի մոտ և բաժանված էր մի քանի մասերի: Դրանցից առաջինն ու ամենաբարձրը Նարին-Կալա ամրոցն էր, որտեղ գտնվում էին խանի պալատը և «որոշ քանակությամբ» հայերի տներ (տե՛ս **С. Гмелин**, Путешествие по России для исследования трех царств естества, часть III, I пол., СПб., 1785, с. 18): Զրկված լինելով գետերից՝ քաղաքը հատուկ խողովակների միջոցով ջուր էր ստանում հարևանությամբ գտնվող աղբյուրներից (տե՛ս **Marschall von Bieberstein**, Tableau des provinces situées sur la côte occidentale de la mer Caspienne entre les fleuves Terek et Kour, St. Pétersbourg, 1798, p. 10). Խանական պալատի բակում տեղադրված էր 50 թղթանոթ (СПФ АРАН, ф. 99, оп. 2, № 13, л. 22).

⁹⁸ Շաքին կամ *Շաքե* Բուն Աղուանք երկրի գավառներից մեկն էր՝ Նուխի-Շաքի կենտրոնով (տե՛ս Սրբոյ հորն մերոյ **Մովսէսի Խորենացոյ** Մատենագրութիւնք, Վենետիկ – Ս. Ղազար, 1843, էջ 606; Армянская география VII века по Р. Х., Текст и перевод издал **К. П. Патканов**, СПб., 1877, էջ 17; Աշխարհացոյց **Մովսէսի Խորենացոյ**, Յանդուածովք նախնեաց լիրատ. **Հ. Ա. Սուքրեան**), Վենետիկ – Ս. Ղազար, 1881, էջ 29; **Ա. Արքահամյան**, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Եր., 1944, էջ

348; **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, Գիտա-քննական բնագիր՝ **Ա. Յակոբեանի**, – «Հանդէս ամսօրեայ», ՃԻԷ տարի, Վիննա-Եր., 2013, սն. 122):

⁹⁹ Շաքիի խանությունը Հաջի Չելերիի գլխավորությամբ 1743/1744 թթ. ապստամբել էր Իրանի կենտրոնական իշխանության դեմ (տե՛ս ստորև, ծնթ. 102): ԺԸ դ. երկրորդ կեսին այդ խանությունից կախվածության մեջ էին գտնվում Արեւիչ, Կուտկաշենի սուլթանությունները, Ճար-Բելոկանի համայնքները: 1751-1752 թթ. Շաքին փորձում է իրեն ենթարկել նաև Գանձակի խանությունն ու Ղազախի շրջանը: Շաքիի խանության ժԸ-ԺԹ դարերի պատմության մասին տե՛ս **С. Маркрян**, Независимое ханство Шаки в XVIII-XIX вв., – «Caucasica», Труды Института политических и социальных исследований черноморско-каспийского региона, т. 1, Под ред. **В. А. Захарова**, Москва, 2011, с. 27-42.

¹⁰⁰ Ըստ Շաքիի պատմության տարեգրի՝ Հաջի Չելերին ծագումով քրիստոնյա քահանա Ղարա-քեշիշի տոհմից էր (**Абдул-Латиф Эфенди**, История шекинских ханов, Баку, 1926, с. 5): Այդ տոհմը Շաքիում իշխում էր 1444-1551 թթ., որից հետո կառավարումն անցնում է Սեֆյան շահերի նշանակված ամիրաներին (տե՛ս **И. П. Петрушевский**, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв, Ленинград, 1949, с. 138).

¹⁰¹ Շաքիի ապստամբները 1744/1745 թ. Հաջի Չելերիի գլխավորությամբ սպանում են Նադիր Զաիի նշանակված կառավարչին, փակվում բերդում և դիմադրում կառավարական զորքին (**Մահբութ Սեդիդի**, Հարավային Կովկասի տեղական իշխանությունների փոխհարաբերությունները Իրանի կենտրոնական իշխանության հետ XVIII դարի վերջից մինչև 1828 թվականը, թեկնածուական ատենախոսություն, Եր., 2014, էջ 20-21):

¹⁰² Ժամանակի մեկ այլ աղբյուրի վկայությամբ՝ Գանձակի խանի ռազմական ուժը կազմում էր 3000 հետևակ և մինչև 5000

հեծյալ (СПФ АРАН, փ. 99, օտ. 2, № 13, և. 53).

¹⁰³ Ղազիդուռուվախի Մուհամմադ խանի դուստրը Հաջի Չելեբիի որդու՝ Աղա Քիչի բեկի (իշխանության է գալիս 1754 թվականին) կինն էր: Շուտով նա սպանվում է աներոջ ձեռքով, և Ֆաթի Ալի խանի ջանքերով Շարիխ խան է դառնում Հաջի Չելեբիի թոռ Հուսեյն խանը (*Абдул Латиф Эфенди*, նշվ. աշխ., էջ 10):

¹⁰⁴ *Ախունդը* մահմեդական հոգևոր գիտնականն է, որն իր դիրքով ավելի բարձր է, քան մուլլան (*Энциклопедический словарь Ефрона и Брокгауза*, т. 2а, СПб., 1891, с. 541).

¹⁰⁵ Թաբասարանի մասին առաջին հիշատակությունը պահպանվել է է դարի «Աշխարհացոյց»-ում Թառասպարը կամ Տապախտարանը անվամբ: Տե՛ս **Անանուն (է դար)**, Աշխարհացոյց, Գիտաքննական քննադիր՝ **Ա. Յակոբեանի**, սն. 114-115: Թաբասարանի պատմական և աշխարհագրական սահմաններն ընդգրկում էին Դերբենդից արևմուտք ընկած տարածքը՝ Ռուբաս և Գյուլգերի գետերի ավազանում: Թաբասարանցիները Կովկասի բնիկ ժողովուրդներից են, որ խոսում են լեզգիական լեզվախմբի լեզուներից մեկով: ԺՁ դարում Թաբասարանում ձևավորվում է ինքնուրույն իշխանություն՝ մայրամուտություն, որը ԺԷ դարի սկզբին իրեն է ենթարկում սահմանամերձ լեզգիաքնակ մի շարք բնակավայրեր (տե՛ս *История Дагестана*, с. 250), ԺԸ դ. երկրորդ կեսին թաբասարանցիները կարող էին ռազմի դաշտ դուրս բերել մինչև 12000 զինվոր (СПФ АРАН, փ. 99, օտ. 2, № 13, և. 40):

¹⁰⁶ *Ղաղի* էին կոչվում շարիաթի հիման վրա դատավարություն իրականացնող մահմեդական դատավորները (*Ислам. Энциклопедический словарь*, Ред. **Л. В. Негря**, Москва, 1991, с. 125).

¹⁰⁷ Հուսեյն խանի քաղաքականությունից դժգոհ ազգականներից Հաջի Արդ ալ-Ղաղերը, նախապես ստանալով Իրաահիմ խանի աջակցությունը՝ 1780 թ. խոովություն է բարձրացնում նրա դեմ և գրավում Շաքին: Նա դաշնակցում է Ֆաթի Ալի խանի հետ

ընդդեմ Ղարաբաղի խանի, որին սկսում է աջակցել սպանված Հուսեյն խանի որդի Մուհամմադ Հասանը: Վերջինս 1784 թ. իշխանության է գալիս և կոտորում Հաջի Արդ ալ-Ղաղերի ընտանիքը: Այսպիսով՝ 1780-ական թթ. կեսերից Շաքիում թուլանում է Ղուբայի խանի քաղաքական ազդեցությունը՝ իր տեղը զիջելով Ղարաբաղի Իրաահիմ խանին:

¹⁰⁸ ԺԸ դարի երկրորդ կեսին Շամախիի խանությունը շարունակում էր նախկին Սեֆյան պետության վարչաքաղաքական մաս կազմող Շիրվան նահանգի անունով կոչվել Շիրվանի խանություն: ԺԸ դարի սկզբի նկարագրություններով՝ Շամախի քաղաքն ուներ ամֆիթատրոնի ձև, ընդարձակ էր, տները փոքր էին՝ բացառությամբ նահանգապետի, հարուստ պաշտոնյաների ու վաճառականների տների: Շամախիի փողոցներն անկանոն դասավորություն ունեին (տե՛ս **Bell John**, *A journey from St.-Peterburg in Russia to Ispahan in Persia with an Embassy from his Imperial Majesty Peter the First*, vol. I, London, 1764, p. 66): Քաղաքի առավել աչքի ընկնող շինությունը լեռնա բարձրադիր մասում գտնվող՝ խանի պալատն էր: Անրոցի վերին մասը պատով էր պաշտպանված, որը ժամանակի ընթացքում տեղտեղ քանդվել էր: Պատի տակ բերդապատնեշ էր կառուցված, որի մեջ տեղադրված էին մի քանի հրանոթներ: Ս. Գմելինի վկայությամբ՝ նեղ ու ղժվարանցանելի քաղաքը բաժանվում էր 9 թաղերի (**С. Гмелин**, նշվ. աշխ., էջ 95):

¹⁰⁹ Նկատի ունի Սեֆյան պետության կազմում Ադերբայջան (*Ադրեքիժան*) նահանգը:

¹¹⁰ 1761 թ. Խան Չոբանի ցեղից Ալի Վերդի բեկի որդիներ Մուհամմադ Սայիդն ու Աղասի խաները սպանել էին Շամախիի նախկին խանին: Մինչ այդ եղբայրներն իրենց էին ենթարկել Շիրվանի ջուլդոր ցեղերին և հաստատվել Հին Շամախիում: Շուտով Մուհամմադ Սայիդը, Քերիմ խան Չելեբի ֆերմանի համաձայն, Հին Շամախիի խան է ճանաչվում (**С. Гмелин**, նշվ. աշխ., էջ

90-91); Նոր Շամախիի բնակիչները, Հաջի Մուհամմադ Ալի խանի հարկային քաղաքականությունից դժգոհ՝ դիմում են Մուհամմադ Մայիդին: Վերջինս առանց վարանելու կատարում է շամախեցիների խնդրանքը և քաղաքը զրավելով, վերջ է դնում երկիշխանությանը: Նոր Շամախիում նա նայիր (տեղակալ) է նշանակում, իսկ Հաջի Մուհամմադ խանը՝ մեկ տարի պատանդ մնալով Հին Շամախիում, կերչում է մահկանացուն:

* Կուրացվել է Նուխիի ներկայիս խանի հոր՝ Հուսեյն խանի կողմից:

¹¹¹ Ըստ Յակուտ ալ-Համադիի՝ Շամախին բազմամարդ քաղաք էր և Շիրվան երկրի մայրաքաղաքը (Օտար աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ Հ. Նալբանդյան, Եր., 1965, էջ 84): 1735 թ. Նադիր Ղուլի խանը Հին Շամախին հողին է հավասարեցնում, իսկ նրանից արևմուտքը հիմնում է Նոր Շամախին (տե՛ս **Иоганн Лерхе**, Выписка из путешествия Иоанна Лерхе, продолжавшегося от 1733 по 1735 год из Москвы до Астрахани, а оттуда по странам лежащим на западном берегу Каспийского моря, – «Новые ежемесячные сочинения», ч. XLIII, январь, 1790 с. 52. Հմմ. **Աբրահամ կաթողիկոս Կրետացոյ**՝ Պատմագրություն անցիցն իրոց և Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1870, էջ 65-66; **А. Бакиханов**, О походе Надир-шаха в Дагестан, – Сочинения. Записки. Письма. Ред. колл. **З. М. Бунятов** и др., Баку, 1983, с. 153). Քաղաքը, ժամանակակից փոխանցմամբ, ավելի մարդաշատ էր, քան Դերբենդն ու Բաքուն միասին վերցրած (J. Cook, Voyages and Travels Trough the Russia Empire, Tartary and Part of the Kingdom of Persia, vol. II, Edinburg, 1770, p. 391).

¹¹² Շրջապատված լինելով թշնամարքար տրամադրված հարևաններով և պարբերաբար ենթարկվելով լեզգիների հարձակումներին՝ Շամախին ստիպված էր ճանաչել Ֆաթի Ալի խանին որպես իր քաղաքական ու ռազմական պաշտպանի:

¹¹³ ԺԳ դարի արաբ հեղինակի հաղորդմամբ՝ Բաքուն (արաբերեն՝ Բաքույա) հայտնի էր որպես սև և սպիտակ նավթի աղբյուր (Օտար աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ ՀՁ **Նալբանդյան**, Եր., 1965, էջ 30): ԺԸ դարի երկրորդ կեսին Կասպից ծովի ամենահարմար ու անվտանգ նավահանգիստը Բաքուն էր: Ի տարբերություն Աստրախանի նավահանգստի, որը Վոլգայի սառցապատման հետևանքով միայն 6 ամիս էր բաց՝ Բաքվի նավահանգիստը գործում էր ողջ տարին: Ըստ աղբյուրի՝ Բաքվի խանը Կասպից ծովում ավելի շատ նավեր ուներ (խոսքն առևտրական նավերի մասին է), քան Դերբենդի Ֆաթի Ալի խանը (СПФ АРАН, ф. 99, он. 2, № 13, л. 43).

¹¹⁴ Ավշերունի թերակղզու տարածքը գրեթե ամբողջությամբ ընդգրկող Բաքվի խանությունը մինչև Նադիր շահի մահը կառավարում էր նրանից իշխանություն ստացած Սելիմ անունով կառավարիչը՝ ծագումով Գիլանից (**Иоганн Лерхе**, նշվ. աշխ., էջ 30):

¹¹⁵ Միրզա Մուհամմադը հասցրել էր բարեկամանալ հարևանների հետ, «իսկ Ղուբայի Ֆեռադայի խանի հետ, որը միաներից վտանգատր կարող էր լինել նորա համար՝ ազգակցութեան մէջ մտա» (Մ. **արքեպ. Սմբատեսեց**, Նկարագիր Սուրբ Ստեփանոսի վանագ Սաղիանի և միա վանօրէից և ուխտատեղեաց ևս և քաղաքացն և գիւղօրէից որք ի Շամախու թեմի, Տիփլիս, 1896, էջ 378) և իր որդուն ամուսնացրեց Ղուբայի խանի ջրոջ հետ: Վերջինս իշխանությունից գրեթե հեռացնում է Բաքվի թուլակամ խանին և, միանձնյա կառավարելով, կյանքի է կոչում Ֆաթի Ալի խանի քաղաքական ծրագիրը: Այդպես Բաքվի խանությունը Ղուբայի խանի ընդարձակ տիրույթներից մեկը դարձավ:

¹¹⁶ Բաքվի խանությունը, բացի ռազմաքաղաքական դիրքից, ուներ նաև առևտրատնտեսական հարուստ ներուժ: Այն Շիրվանի մյուս տիրույթների համեմատությամբ աղի և նավթի արտա-

դրության մեծ առավելություններ ուներ: Խանության տարածքում բազմաթիվ աղի լճերի առկայության շնորհիվ (աղի լճերի մասին մանրամասն տե՛ս՝ *Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях*, ч. IV, СПб., 1836, с. 33-36) աղի արտահանման ծավալները նավթից հետո գրավում էին երկրորդ տեղը:

- ¹¹⁷ 1770-ական թթ. Այսրկովկաս այցելած ակադեմիկոս Յ. Գիլդենտեղը նշում էր, որ Շիրվանում գործածվող թուրքական բարձրագույն թաթարերենը և թուրքերենը այնքան են իրարից տարբերվում, որքան լատիներենն իտալերենից: Թաթարական երեք լեզուներից առավել մոտ էր թուրքերենին թերեքսմենների լեզուն: Որպես թերեքսմենների էթնիկ տարածքներ նա նշում էր Հարավային Դաղստանը, Դերբենը, Շիրվանը՝ Ֆաթի Ալի խանի ողջ տիրույթները՝ մինչև Սալիան (**Иоганн Антон Гилденштедт**, Путешествие по Кавказу в 1770-1773 гг., СПб., 2002, с. 257). Մինչև Ի դարի սկիզբը թերեքսմենները դիտարկվել են որպես առանձին էթնոս, սակայն հետագայում նրանք միացվում են (կոնսոլիդացվում) աղբրեջանցիների հետ՝ պահպանելով էթնիկ ինքնանվանումն ու ինքնընկալումը: Հարևանները՝ կուրդները, դարգինները, նրանց կղզում են թերեքսմեններ, իսկ հյուսիսային կուրդները, ավարները, դարգինների մի մասը և մյուսները՝ փաղար (Народы Дагестана, с. 507). Հայկական աղբյուրներում նրանք հիշատակվում են *թարաքամա* անվամբ՝ «վրանաբնակաց և խաշնարածաց ազգ մի» (տե՛ս **Եսայի Հասան Զալաբանց**, Պատմություն համառոտ Աղռանից երկրի, Երուսաղեմ, 1868, էջ 16):

- ¹¹⁸ Շաղաղի կոչվող քրդական ծագմամբ այս ցեղը հիշատակվում է ԺՁ դարի ջուրդ հեղինակ Շարաֆ-խան Բիթլիսիի «Շարաֆ-նամե» երկում որպես Զազիրայի (Միջագետքի) նահանգներից մեկում ապրող քրդական չորս աշիրայություններից մեկը (**Ша-**

раф-хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф-наме, т. I, Москва, 1967, с. 206). Անգլիացի ճանապարհորդ Ջ. Բեյի տեղեկություններով (1715 թ.)՝ Մուղանի դաշտը ոռոտներն էին այդպես կոչում, իսկ պարսիկներն այն անվանում էին Քուրդիստան՝ նշելով, որ քրդերն այստեղ ապրում էին ողջ տարին (**Дж. Белл**, Белевы путешествия чрез Россию в разныя Асиятския земли, а именно: в Испаган, в Пекин, в Дербент и Константинополь, ч. I [Путь в Персию и Китай], Перевел с французского **Михайло Попов**, СПб., 1776, с. 62).

- ¹¹⁹ *Շահսևաններ* էր կոչում (*շահին սիրողներ*) Իրանի տերության հյուսիսարևմտյան տարրեր հատվածներում գտնվող բազմաթիվ ցեղային խմբերի ամբողջությունը (**R. Tapper**, Frontier nomads of Iran. A political and social history of the Shahsevan, Cambridge University Press, 1997, p. 24; **Խոյսի**՝ Shāhsevan in Safavid Persia, – «Bulletin» of the School of Oriental and African Studies, University of London, vol. 37, № 2 /1974/, p. 321-354). Շահսևան կարող էին դառնալ նաև ոչ թյուրքական ժողովուրդների ներկայացուցիչներ, օրինակ՝ կովկասյան ժողովուրդներ, քրիստոնյաներ (տե՛ս **Գ. Асатрян**, Этническая композиция Ирана: от «Арийского простора» до азербайджанского мифа, Ер., 2012, с. 54, прим. 23). Շահսևանները ծնունտ ամիսներին քնակվում էին Շարրանի մահալում, որի իրավունքը ստացել էին Ղուրայի Հուսեյն Ալի և Ֆաթի Ալի խաներից (տե՛ս **Փ. Симонич**, Описание Южного Дагестана. 1796 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. **М. Косвена** и **Х. Хашаева**, Москва, 1958, с. 147).

- ¹²⁰ Շուշի քերդաբաղաբը հիմնադրվել էր 1754 թ. և 1780-ական թվականներին քարե ամուր պարիսպներով քաղաք էր, որը պաշտպանում էին տարբեր տրամաչափի մինչև 50 թնդանոթ (СПФ АРАН, ф. 99, оп. 2, № 13, л. 53). Ըստ ԺԺ դ. առաջին

քառորդի տվյալների՝ քաղաքը բաժանված էր երեք թաղամասերի՝ Թարրիզլիի (Թարրիզեցոց), Ղազանչայիի (Ղազանչեցոց) և Ազխիի (Ազուլեցոց): Տե՛ս Описание Карабагской провинции, составленное в 1823 году, действительным статским советником **Могилевским** и полковником **Ермоловым 2-ым**, Тифлис, 1866, с. 8)։

¹²¹ Շահնագարը Արցախի հինգ մելիքական տներից մեկի՝ Վարանդայի Մելիք-Շահնագարյանների տոհմից էր (նրանց տոհմաձառի մասին տե՛ս **Ա. Մաղայան**, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Եր., 2007, էջ 158-198)։ Նա հարգանք և վստահություն էր վայելում Ղարաբաղի խաների մոտ։ Այսպես՝ երբ Փանահ խանն իր իշխանության սկզբում ֆինանսական օգնության կարիք ուներ, ապա դիմում է Շահնագարին։ Վերջինս քաղաքական հաշվարկներից ելնելով՝ իր դուստր Հուրզադ խանումին կնության է տալիս Իբրահիմ խանին (տե՛ս **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները՝ **Ք. Կոստիկյանի**, Եր., 2000, էջ 42)։ Սակայն Մելիք-Շահնագարի ազգադավ գործունեության հետևանքով Փանահ խանը ներթափանցեց Արցախ՝ տիրելով Շուշիի անառիկ բերդին։ Վարանդայի մելիքը չկարողանալով պայքարել իրեն թշնամացած Արցախի մյուս մելիքների դեմ՝ դաշնակցեց Փանահի հետ։ «Մելիք-Շահնագարն, տեսնել զուկարություն իր, ի հոգս անկառ զհետևանաց գործոյն և եկն առ գերաստիջան խանն, որում և ծառայէր հաստարմութեամբ» (**Միրզա Աղի-գյոզալ-բէկ**, Ղարաբաղ-նամէ, աշխատասիրությամբ՝ **Ա. Մաղայանի**, Եր., 2016, էջ 44)։

¹²² Ավանդության համաձայն՝ Ղարաբաղի խաները ծագում էին թյուրքական *ջևանջիր* ցեղախմբի *սարաջալու* ցեղից (**Мирза Джемал Джеванджир Карабагский**, История Карабага, Баку, 1959, с. 67)։ Իբրև թե նրա առաջնորդներից մեկը, լքելով իր

հայրենիքը, հաստատվում է Լոռիում, ապա ծառայության մտնում Գանձակի խաների մոտ։ Այստեղից էլ անցնում է Ղարաբաղ, միանում ջևանջիր ցեղին և ամուսնանում։ Նա մի որդի է ունենում Ալի անունով, որին գունատ դեմք ունենալու համար կոչում էին *Սարիջե* (դեղնավուն)։ Վերջինիս գլխավորած խմբավորումը կոչվում է *Սարիջե-ալիլու*։ Նրա ունեցվածքը ժառանգաբար անցնում է որդուն՝ Իբրահիմ աղային, որի ավագ որդին՝ Տազլ Ալի բեկը դառնում է Նադիր շահի իշիք-աղասիի զինվորներից մեկը։ Երբ նա սպանվում է ռազմի դաշտում, շահն իր մոտ ծառայության է կանչում Իբրահիմի կրտսեր որդուն՝ Փանահ Ալիին (**Միրզա Յուսուֆ Ներսեսով**, նշվ. աշխ., էջ 46-47)։

¹²³ Փանահ խանին հաջողվում է փախչել շահի ծառայությունից և անցնել Ղարաբաղ, որտեղ թյուրքական ջևանջիր, օթուզիքի, քյարիլու, ինչպես նաև հորասանից Վրաստան վերադարձած այլ ցեղերի հետ ավազակային հարձակումներ է գործում։ Նա դիր շահի մահից հետո (1747 թ.) նա հնազանդություն է հայտնում Աղլի շահին (1747-1748), նրանից խայթաթ, սուր և խանության ռաղամ ստանում (**Միրզա Յուսուֆ Ներսեսով**, նշվ. աշխ., էջ 47-48)։ 1749 թ. հիմնում է Թանանակյուտ բերդը, Շահ-բուլաղ արքյուրի մոտ, որից էլ բերդը ստացավ նոյն անունը (**Միրզա Աղիգյոզալ-բէկ**, Ղարաբաղ-նամէ, Աշխատասիրությամբ՝ **Ա. Մաղայանի**, Եր., 2016, էջ 42-43)։ Ղարաբաղի խանության ձևավորման մասին տե՛ս **А. Магальян**, Арцахские мелкства и возникновение карабахского ханства, – «Русский сборник: Исследования по истории России», Ред. **О. Эльдман**, т. VIII, Москва, 2010, с. 7-25)։

¹²⁴ Հավանաբար, Իբրահիմ խանը միայն որոշ շինարարական աշխատանքներ է իրականացրել, քանի որ Շուշիի բերդը գոյություն ուներ անվավազ ԺԸ դարի սկզբից (Արմանո-րուսկե օտношения в первой трети века, т. II, ч. I, Ер., 1964, с. XLI)։

- ¹²⁵ Գանձակի, Ղարաղալի, Նախիջևանի և Արդեբիլի խաները դեռևս Փանահ խանի օրոք էին հնազանդվել Ղարաբաղի տիրակալին: Վերջինս կառավարիչներ և փոխանորդներ էր նշանակում այդ վայրերում ու պատանդներ պահում Թառնակյոտ ամրոցում (**Միրզա Յուսուֆ Ներսեսով**, նշվ. աշխ., էջ 54):
- ¹²⁶ Ա. Սուվորովի 1780-ական թթ. սկզբի տվյալներով՝ Ղարաբաղի խանի զինված ուժերը՝ բաղկացած պարսիկներից և հայերից, կարող էին հասնել 1000 հետևակի և 5000 հեծյալի (СПФ АРАН, փ. 99, օտ. 2, № 13, ռ. 53):
- ¹²⁷ Այսրկովկասյան մյուս տիրակալների օրինակով Ղարաբաղի խանը նույնպես անհրաժեշտության դեպքում դիմում էր վարձու լեզգիների ուժին (տե՛ս ՄՄ, ԿԴ, թղթ. 18, վավ. 195, էջ 30):
- ¹²⁸ Խանության կլիման մաքուր էր («առողջ»), բազմաթիվ արոտավայրերը հնարավորություն էին տալիս անասնապահությունը զարգացնել, իսկ բնակիչները հարուստ էին (տե՛ս СПФ АРАН, փ. 99, օտ. 2, № 13, ռ. 53):
- ¹²⁹ Կողմերի միջև պայքարը սրվում է 1780-ական թթ., երբ Գեորգիևսկի դաշնագրով տարածաշրջանում ամրապնդվում են Ռուսական կայսրության քաղաքական դիրքերը: Այդ ընթացքում Ֆաթի Ալի խանն ապաստան է տալիս Իբրահիմի եղբայր Մեհրալի խան Ջևանշիրին, իսկ Ղարաբաղի խանը հովանավորում էր Շամախիի խաներին:
- ¹³⁰ Ավարտելով արշավանքը Նախիջևան՝ Իբրահիմը 1785 թ. ձեռնամուկ եղավ դեպի հույ արշավանքին: Սակայն արշավանքն անհաջող ընթացք ունեցավ, և նա Ջաֆար Ղուլի խանի հետ հաշտություն կնքեց (տե՛ս **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, էջ 65):
- ¹³¹ Նկատի ունի Երևանի խանությունը՝ Չովխուր-Սա՛աղը:
- ¹³² Ավարիայի Օմար խանի ջուր Աղա Բիբեն Ղարաբաղի Իբրահիմ խանի կինն էր, որով նա քաղաքական դաշինք էր հաստատել Ղարաբաղի ամենահզոր տիրակալներից մեկի հետ: Իբրահիմ խանը ազգակցական կապեր ուներ նաև շահսևանների, Ղա-

րաղալի, հույի և Գանձակի խաների հետ (տե՛ս **Мирза Джемал Джеванишир Карабагский**, նշվ. աշխ., էջ 79):

- ¹³³ Ղարաբաղի Փանահ խանը մահացել է 1760-ական թթ. սկզբին, իսկ Իբրահիմ խանը, տարեգրի փոխանցմամբ, իշխանության էր եկել 1762 թ. (հմմ. **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, նշվ. աշխ., էջ 63):
- ¹³⁴ Գանձակը արաբական աղյուրներում հիշատակվում է նաև որպես Ջանգա՝ Առան երկրի մայրաքաղաք, որա «մեծագույն քաղաքը», որին ժողովուրդը կոչում էր նաև Քանջա (Օտար աղյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ **Ն. Նալբանդյան**, Եր., 1965, էջ 50, 104):
- ¹³⁵ ԺԸ դարի երկրորդ կեսին քաղաքը պաշտպանված էր քարե ամուր պարիսպներով և մինչև 40 թնդանոթով (СПФ АРАН, փ. 99, օտ. 2, № 13, ռ. 53):
- ¹³⁶ Շահ Աբբաս Բ-ից սկսած Գանձակում և Ղարաբաղում դաջարական գիադոլի ցեղից խաներ էին իշխում: Շահական գրագրություններում նրանք «Ամիր-ալ-ումարա, Գանձակի և Ղարաբաղի բեկլարբեկ Ղաջար Ջիադոլի» տիտղոսով էին հիշատակվում (տե՛ս **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, էջ 38):
- ¹³⁷ Ֆաթի Ալի խանը խնդրում է Իբրահիմին ազատ թողնել Գանձակի խանին՝ փոխարենն առաջարկելով բարեկամական հարաբերություններ հաստատել Ղարաբաղի խանի հետ (РГВИА, փ. 52, օտ. 1/194, Ժ. 331, Կ. 6, 1784 Ը., ռ. 33):
- ¹³⁸ Հերակլ Բ արքան և Իբրահիմ խանը գրավում են Գանձակը և Նրակից ստացվող եկամուտները կիսում (տե՛ս РГАДА, ГАРИ, ք. 23, Ժ. 13, Կ. 7, ռ. 246):
- ¹³⁹ Իրականում պետք է լինի 1784 թվական:
- ¹⁴⁰ Գանձակի պատկանելության հարցի շուրջ Հերակլն իր անհանգստությունն էր հայտնում Պ. Պոտյոմկինին 1784 թ. փետրվարի 15-ի նամակում: Հիմնավորելով, որ Գանձակը պատմականորեն պատկանել է վրաց արքաներին, նա խնդրում էր, որ երբ ու-

սական իշխանությունները քննության անեն Իրրահիմ խանի ինդրանըրը ճանաչել ուսական գերիշխանությունը, ապա Գանձակի հարցը լուծելիս հաշվի անել նրա անցյալը՝ նշելով, որ Ստ. Բունաշևի գծած տարածաշրջանի քարտեզի վրա Գանձակը մտնում էր Վրաստանի կազմի մեջ (Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60-х начало 90-х годов XVIII в.). Документы и материалы, вып. 1, Материал подобран и подготовил к печати В. Гамрекели, Тбилиси, 1980, с. 140).

¹⁴¹ Գանձակը հայաբնակ հնագույն քաղաքներից էր, որտեղ ժՇ դ. երկրորդ կեսին մեծաքանակ հայ բնակչություն կար: Տե՛ս, օր.՝ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. Գ (ԺՇ-ԺԹ դդ.), թարգմանեց՝ **Լ. Մելիքսեթ-Քեկ**, Եր., 1955, էջ 152:

¹⁴² Ղազախ ցեղը ղզրաշական ցեղերից մեկն էր (տե՛ս **И. Петрушевский**, նշվ. աշխ., էջ 92, 134):

¹⁴³ 1736 թ. Մուղանի դաշտում հրավիրած ժողովին Գանձակի խաները ղեմ են արտահայտվում, որ Նադիր Ղուլի խանն Իրանի շահի հոչակվի (տե՛ս **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, էջ 39): Որոշ ժամանակ անց շահը բորչալու և դազախ ցեղերին հանձնում է Վրաստանի վախի ենթակայությանը, Ղարաբաղի մի քանի ցեղերի հրամայում է հեռանալ Խորասան, իսկ Ղարաբաղի հինգ մահալներում հայ մելիքներ է նշանակում, որոնք ենթարկվելու էին շահական արքունիքին՝ թուլացնելով Գանձակի խաների իշխանությունը (տե՛ս **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, էջ 39):

¹⁴⁴ Ըստ Աբրահամ Կրետսացու՝ 1740-ականներին Երևանի խանությունը բաժանված էր ինը վարչական շրջանների՝ մահալների: Դրանք էին Կարբիի, Ղըրխբուկաղի, Շորագայի, Իկտիրի, Ծաղկածորի, Գեղարքունիքի, Ապարանի և Շիրակավանի մահալները (**Աբրահամ կաթողիկոս Կրետսացու**)՝ Պատմագրութիւն անցիցն իլոց և Նատր-Շահին պարսից, էջ 61-62):

¹⁴⁵ Երևանի և Նախիջևանի խանությունները Սեֆյան պետության Չուխուր-Սա՛դդի բեկլարբեկության նահանգներն էին: Նադիր շահը Երևանի կառավարիչ և բեկլարբեկ էր նշանակել Մուհամմադ Ռեզա խանին: Հետագայում Երևանի կառավարչին տրվում է նաև սարդարի՝ զորքի գերագույն հրամանատարի պաշտոնը: Նադիր շահի մահից հետո Երևանը ևս կիսանկախ կարգավիճակ է ձեռք բերում: Վրաց աղբյուրի փոխանցմամբ՝ Հերակը արքան 1760 թ. Իրանի տիրակալ Քերիմ խան Ջենդից ուղերձ է ստանում՝ օգնել բռնելու աֆղան խոովարար Ազադ խանին՝ փոխարենը խոստանալով Երևանի խանությունը: Քերիմ խանը պահում է խոստումը և գերեվարած Ազադ խանին ստանալուց հետո Երևանի խանին այսպիսի նամակ է գրում. «Որքան էլ պետական հարկ լինի թեզ վրա դրված, բոլորը Իրակլի թագավորին պիտի տաս և նրան հնազանդվես, ինչպես էլ հնազանդության կարգն է» (Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. Գ, էջ 176): 1779 թ. Երևանի Հուսեյն Ալի խանը (1762-1783), օգտվելով Իրանում Քերիմ խան Ջենդի մահվան (1779 թ.) հետևանքով առաջացած խառնակ իրավիճակից, հրաժարվում է ենթարկվել Հերակլին (տե՛ս **П. Бурков**, Материалы для новой истории Кавказа, с. 73):

¹⁴⁶ Համաձայն մի անանուն վրաց սկզբնաղբյուրի (1769 թ.)՝ Երևանի խանի զինվորական հնարավորությունները չէին գերազանցում 2000 զինվորը (Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. Գ, էջ 153): Ըստ Ա. Սուվորովի՝ Երևանի խանը մարտի դաշտ կարող էր հանել մինչև 1000 հետևակ և հեծյալ, իսկ քաղաքը պաշտպանված էր քարե ամուր պարիսպներով և շուրջ 40 թնդանոթով (СФФ АРАН, ф. 99, он. 2, № 13, н. 54):

¹⁴⁷ ԺՃ դարում Մակուն հանդիսանում էր քրդական *մահմոդի* ցեղի տիրույթը՝ կառավարվելով բեկի կողմից: Սակայն ժՇ դ. 30-ական թթ. քրդական այդ ցեղը զրկվում է իր տիրույթից՝ թուրք-իրանական ուսմական բախումների ընթացքում թուրքերին

պաշտպանելու համար: Շահը Մակուն որպես օլթա փոխանցում է ղզրաշական *բայթթ* ցեղին, որի տիրապետությունն այստեղ շարունակվում է մինչև 1923 թ.: Մակուի Ամեղ խան հաքիմը 1747 թ. գտնվում էր Նադիր շահի շքախմբում Խորասանում, երբ նրա դեմ կազմակերպվում է մահափորձ: Ամեղ խանն առևանգում է շահի կանանցից մեկին, զավթում մեծաթիվ գանձեր և փախչում Մակու (տե՛ս **И. Петрушевский**, նշվ. աշխ., էջ 130):

¹⁴⁸ Թումանը դրամական միավոր է, որը հավասար էր 10000 դինարի: Միջին դարերում թումանի և դինարի փոխարժեքը նվազման միտում է ունեցել: ԺԸ դ. առաջին կեսին մեկ թումանը հավասար էր 19 ուրլու (տե՛ս **Л. Богданов**, *Персия*, СПб., 1909, с. 96).

¹⁴⁹ Հուսեյն Ալի խանը մահացել էր ծանր հիվանդությունից հետո (ՄՄ, ձեռ. 2803, էջ 179ա):

¹⁵⁰ Երևանի խանությունում Հուսեյն Ալի խանի ավագ որդի Ղուլամ Ալիին 1783 թ. նոյեմբերին խան են հռչակում Հերակլ արքայի համաձայնությամբ (ՄՄ, ձեռ. 2803, էջ 179ա): Սակայն 1784 թ. հունիսի 7-ին նա Երևանի հրապարակում գնդակահարվում է Բուլնյաթ Ալի անունով մի պարսիկի ձեռքով (**А. Иоаннисян**, *Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия*, Ер., 1990, с. 266-267). Իսան է հռչակվում Հուսեյն Ալի խանի անչափահաս որդին՝ Մահամմադը, որի մայրը թիֆլիսցի մի քրիստոնյա էր (տե՛ս **С. Бурнашев**, *Картина Грузии или описание политического состояния царств Карталинскаго и Кахетинскаго*, с. 25-26).

¹⁵¹ Յակուտ ալ-Համալիի խոսքով՝ Նախիջևանը քաղաք էր Աղեր-բայջանի ծայրամասում (Օտար այդյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ **Հ. Նալբանդյան**, Եր., 1965, էջ 117): Դեռևս ԺԶ դարում Նախիջևանի հարուստ շրջանը հանդիսանում էր *ուսթաջլու* ղզրաշական ցեղի *քենգերլու*

ցեղախմբի ժառանգական օլթան: Աբբաս Ա շահի ժամանակ Նախիջևանի հաքիմ և ցեղի առաջնորդ էր Մաղսուդ-Սուլթան քենգերլու-ուսթաջլուն (տե՛ս **И. Петрушевский**, նշվ. աշխ., էջ 132): Նադիր շահի օրոք Նախիջևանն անջատվել էր Չոխսուր-Սա'ադի վիլայեթից և կառավարվում էր շահի նշանակած հաքիմի ու կառավարչի միջոցով: Նադիր շահից հետո Նախիջևանում խան է հռչակվում Հեյդար Ղուլին, որը հալածանքներ է սկսում խանության հայերի նկատմամբ (**Հ. Միք. Չամչեանց**, Հայոց պատմութիւն (սկզբից մինչև 1784 թ.), հտ. Գ, Եր., 1984, էջ 842): Հայերի վիճակը փոքր-ինչ բարելավվում է Բեհնամ խանի օրոք (1749 թ.), սակայն Նախիջևանից անջատվում և Ղարաբաղի խանությանն են անցնում Մեղրիի և Կապանի շրջանները: Թավրիզի բեկարբեկի աջակցությամբ Հեյդար Ղուլի խանը վերադարձնում է Նախիջևանի խանությունը, սակայն 1751 թ. Իրանի գահի հավակնորդ Ազադ խանը Նախիջևանում վերականգնում է Բեհնամ խանի իշխանությունը (**Հ. Միք. Չամչեանց**, նշվ. աշխ., հտ. Գ, էջ 55):

¹⁵² Խոսքը Նախիջևանի երկու եղբայր խաների՝ Ջաֆար Ղուլիի և Աբաս Ղուլիի մասին է, որոնք անհաշտ էին միմյանց հետ: Այդ պատճառով էլ Քերիմ խանը նրանց Շիրազ է տանում և պատանդ պահում, իսկ խան է նշանակում Շուքրուլլա խանին: Նա սերտ կապեր ուներ Ղարաբաղի Իրբահիմ խանի հետ, որն էլ, օգտվելով Քերիմ խանի մահից հետո Իրանում տիրող խառնակ վիճակից՝ զորք է տրամադրում Շուքրուլլա խանին՝ Խոյի Ամեղ խանի դեմ կռվելու համար: Վերջինս միավորվում է Ուրմիայի Իմամ Ղուլի խանի հետ և ջախջախում Նախիջևանի խանի զորքը: Իսանը սպանվում է մարտի դաշտում, և նոր խան է հռչակվում սպանվածի հորեղբոր որդին՝ Աբաս Ղուլի խանը, սակայն Խոյի և Ուրմիայի խաները անողոք պայքար են սկսում նրա դեմ՝ Նախիջևանին տիրելու նպատակով: Աբաս Ղուլին օգնության խնդրանքով դիմում է Հերակլ արքային (ՐԳՅՈԱ, փ. 52,

on. 194, d. 286, ч. I, 1783, л. 361), որն էլ Երևանի խանին հրամայում է զորք տալ Արաս Ղուլիին: Ըստ Վ. Գրիգորյանի՝ Երևանի Ղուլան Ալի խանը, վախենալով Այսրկովկասում Ալի Մուրադ Չենդի ազդեցության ուժեղացումից ի դեմս Չանարդուլիի (իմս՝ Ջաֆար Ղուլի)՝ ռազմական օգնություն է տրամադրում Արաս Ղուլի խանին. տե՛ս Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջում (1780-1800), Եր., 1958, էջ 84-85: Վերջինիս իշխանությունը վերականգնվում է մինչև Ալի Մուրադ խան Չենդի Իրանի մեծ մասում հաստատվելը: Թավրիզի Նաջաֆ Ղուլի և Խոյի Ահմեդ խաների խնդրանքով՝ իշխանությունն անցնում է Շիրազում որպես պատանդ գտնվող եղբայրներից Ջաֆար Ղուլի խանին, իսկ Արաս Ղուլին անցնում է Թիֆլիս և օգնություն խնդրում՝ խոստանալով հնազանդվել ռուսական գահին (Վ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 84-86): Հերակլ արքայի հորդորով Արաս Ղուլին անցնում է Երևան, բայց Հուսեյն Ղուլի խանի հանկարծակի մահն ի չիք է դարձնում Նախիջևանի խանությունը վերադարձնելու վրացական ծրագրերը:

¹⁵³ Խոյի Ահմեդ խանը 1784 թ. Հերակլ արքային գրում էր, որ եթե վրաց տիրակալը Արաս Ղուլի խանին չգերադասի իրենից՝ Խոյի խանից, և աջակցի Ալի Մուրադ խան Չենդի օգնությամբ իշխանության եկած Ջաֆար Ղուլի խանին, ապա ինքը շնորհակալ կլինի: Հակատակ դեպքում Ահմեդ խանն առաջարկում էր Նախիջևանի ժողովրդին հարցնել, թե ում է նա ուզում տեսնել խանի պաշտոնում՝ Արաս Ղուլիի՞ն, թե՞ Ջաֆար Ղուլիին (Межкавказские политические и торговые связи Восточной Грузии, с. 145).

¹⁵⁴ Քրիստոնյաներից բացի Նախիջևանում ապրում էին *քենզերու* (920) և *բալաջարի* ցեղերի քրդեր (660) տոն (Статистическое описание Нахичеванской провинции, Составленное В. Григорьевым, СПб., 1833, с. 30, 32).

¹⁵⁵ Խոյը Ժե-ԺԸ դարերում միավորվել էր Սալմաստի հետ, որը ԺԶ դարից սկսած կառավարվում էր քրդական *դումբուլի* ցեղի կողմից՝ դառնալով ժառանգական տիրույթ (И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 129):

¹⁵⁶ Արդարիվ կամ Արտավիլը արաբական աղբյուրներում հիշատակվում է որպես Աղեբրայջանի հայտնի քաղաքներից մեկը (Օտար աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ Հ. Նալբանդյան, Եր., 1965, էջ 13):

